ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 22-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Բաղդասարյանը, մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Մ. Թադևոսյանը:

Բացակայում էին. Մ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մանուկյանը:

Օրակարգ

1. 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվելիք առարկաների ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:
2. 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:
3. ՛՛Wisdom՛՛ ամսագրում հոդված տպագրելու մասին:
4. 2022-2023 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները ներկայացնելու մասին:
5. Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվելիք առարկաների ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Արձակուրդի ընթացքում վերանայվել և լրամշակվել են 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվելիք բոլոր առարկաների ուսումնամեթոդական փաթեթները: Ի նկատի ունեցեք, որ Դուք եք պատասխանատու Ձեր փաթեթի ամբողջականության, դասընթացի նպատակի, խնդիրների, վերջնարդյունքների, գործնական աշխատանքների մեթոդների ընտրության և վերջնարդյունքների համապատասխանության և որակի համար: «Մանկավարժություն» առարկան դասավանդող բոլոր դասախոսները պետք է լրացումներ կատարեն առարկայի ուսումնամեթոդական փաթեթում: Մասնավորապես, եթե առարկան դասավանդվում է 2 կիսամյակով, առնվազն 10 ժամ պետք է հատկացնել կրթության բնագավառի օրենսդրության ուսումնասիրությանը՝ շեշտը դնելով կրթական քաղաքականության հիմնական սկզբունքների վրա: Այսինքն, թե ինչով է տարբերվում, օրինակ, ՛՛Հանրակրթության մասին՛՛ ՀՀ օրենքը ՛՛Բարձրագույն կրթության մասին՛՛ ՀՀ օրենքից, ինչպես ենք մենք կապում այս երկու օրենքները որպես շարունակական կրթության ապահովման միջոց և այլն: Կարելի է նաև գործնական աշխատանքներ իրականացնել, օրինակ, օրենսդրության վերաբերյալ կլոր սեղան կամ բանավեճ: Ինչպես նաև պետք է որոշ թեմաներ նվիրված լինեն հանրակրթական պետական չափորոշիչներին: Չափորոշիչների ուսումնասիրությանը հաջորդող գործնական աշխատանքները պետք է իրականացնել նախագծային մեթոդով՝ հաշվի առնելով տվյալ կուրսի մասնագիտացումը: Օրինակ. պատմության ֆակուլտետի ուսանողները նախագիծը պետք է անեն պատմություն առարկայից, կենսաբանները՝ կենսաբանություն առարկայից և այլն: Օրենսդրության և չափորոշիչների վերաբերյալ առաջադրանքները կարող եք ներառել նաև ինքնուրույն աշխատանքներում՝ որպես գնահատվող հանձնարարություն:

2 առարկայի փաթեթ այս տարի ևս մեկ անգամ մանրամասն և հիմնովին պետք է վերանայվեն, դրանք են «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» և «Մանկավարժական մարդաբանություն» առարկաների փաթեթները: Բոլոր

դասախոսները, ովքեր դասավանդում են այս առարկաները, խնդրում եմ աշխատեք միասին փաթեթները բարելավելու ուղղությամբ, որից հետո մենք կքննարկենք և կհաստատենք դրանք ամբիոնի նիստի ժամանակ: Մյուս բոլոր փաթեթները խնդրում եմ ևս մեկ անգամ վերանայեք և տեղադրեք Classroom հարթակում մինչև 30.08.2022թ.:

Ստացել ենք հանձնարարություն մշակել մանկավարժական 2 նոր առարկաների ուսումնամեթոդական փաթեթներ՝ «Թվային մանկավարժություն» և «Գնահատում, չափում, ռեֆլեքսիա»: ՅՈՒՆԵՍԿՕ-ն այս դարը՝ մինչև 2050թ.-ը համարում է թվային գրագիտության դար, ուստի մենք բոլորս պետք է կարողանանք այդ լեզուն հասկանալ: Յուրաքանչյուր դասախոս և ուսանող պետք է այսօր թվային գրագիտություն ունենա և այն, ինչ մշակվելու է պետք է հասանելի լինի ցանկացած ուսանողի համար, ցանկացած մակարդակով, ցանկացած ֆակուլտետում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվելիք առարկաների ուսումնամեթոդական փաթեթները: **2.** Վերանայել «Մանկավարժություն» առարկայի ծրագրերը՝ ըստ ներկայացված պահանջների՝ մինչև ս/թ սեպտեմբերի 5-ը: **3.** Հանձնարարել. Լ. Պողոսյանին և Գ. Հարությունյանին մշակել «Թվային գրագիտություն» առարկայի փաթեթը: Լ. Նազարյանին և Գ. Եգանյանին մշակել «Գնահատում, չափում, ռեֆլեքսիա» առարկայի փաթեթը՝ մինչև 2023թ. հունվարի 20-ը:

4. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Պատրաստ է 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը: Խնդրում եմ ծանոթացեք և եթե չկան լրացումներ, առաջարկում եմ հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանը: /Կցվում է/

5. ԼՍԵՑԻՆ - ´´Wisdom´´ ամսագրում հոդված տպագրելու մասին:

Ա. Թոփուզյան – Ինչպես գիտեք մեր համալսարանում գործում է ´´Wisdom´´ ամսագիրը, որը ընդգրկված է scopus, web of science գիտաչափական շտեմարաններում: Ամսագրի 2022թ. դեկտեմբերի համարը նվիրված է մեր բուհի 100-ամյա հոբելյանին և այդ հատուկ համարում նախատեսում են տպագրել կրթության փիլիսոփայությանը նվիրված հոդվածներ: Տիկին Գևորգյանը խնդրեց փոխանցել, որ եթե մեր դասախոսներից կլինեն ցանկացողներ տպագրել իրենց հոդվածը այս ամսագրում, տպագրության բոլոր ծախսերը կհոգա բուհը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ներկայացնել հոդվածներ ´´Wisdom´´ ամսագրում տպագրելու համար մինչև 15.10.2022թ.:

6. ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները ներկայացնելու մասին:

Ա. Թոփուզյան – Անհրաժեշտ է պատրաստել և ամբիոն ուղարկել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Խնդրում եմ թեմաները ձևակերպելիս՝ հաշվի առնել, որ. դրանք պետք է լինեն արդիական, փոքր, կոնկրետ թեմաներ, որոնք կհամապատասխանեն բակալավրի և մագիստրոսի գիտելիքների և հմտությունների մակարդակին և նրանց առջև դրվող պահանջների կատարմանը: Նախորդ տարիների թեմաները չկրկնել, ավարտական աշխատանքի թեմաները ավելի հեշտ և մատչելի լինեն:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները մինչև 29.08.2022թ.:

7. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին: /կցվում է/

Ա. Թոփուզյան - Ամբիոնում կազմվել է 2022-2023 ուս. տարվա մշտական գործող «Ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրներ» խորագրով սեմինարի գրաֆիկը՝ ներկայացված թեմաների հիման վրա: Խնդրում եմ խստորեն հետևել գրաֆիկի

կատարմանը և սեմինարը վարելու համար ներկայացնել ամբիոնից դուրս մասնագետներին նույնպես:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ամբիոնում մշտական գործող սեմինարի 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի գրաֆիկը: Սեմինարը վարելու համար հրավիրել նաև հանրապետության լավագույն մանկավարժներին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

25.08.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 21-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյանը:

Բացակայում էին. Մ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մանուկյանը, մ.գ.թ., դասախոս Մ. Թադևոսյանը

Օրակարգ

1. Կամընտրական առարկաների բազայի հաստատման մասին:
2. Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին:
3. «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության հարցաշարը հաստատելու մասին:
4. Ամբիոնի՝ որակի հանձնաժողովի նախագահ Լ. Նազարյանի հաղորդումը՝ 1-ին կիսամյակում դասավանդվելիք առարկաների մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Կամընտրական առարկաների բազայի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Ամբիոնի դասախոսները ներկայացրել են այլընտրանքային առարկաների իրենց առաջարկությունները, որոնք առաջարկում եմ հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել կամընտրական առարկաների ներկայացված ցանկը: /Կցվում է/

2. Հանձնարարել բոլորին ըստ ցանկի մշակել առաջարկված առարկաների ուսումնամեթոդական փաթեթները և ներկայացնել ամբիոնի քննարկմանը՝ մինչև 2023թ. հունիսի 1-ը:

2. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին:

Գ. Հարությունյան – 1-ին կիսամյակում նախատեսվում է իրականացնել մանկավարժական պրակտիկա առկա բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերում:

- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի **Սոցիալական մանկավարժություն մասնագիտության 3-րդ կուրսի** ուսանողների մանկավարժական պրակտիկան կկազմակերպվի 12.09.2022թ. մինչև 19.12.2022թ. /շաբաթական մեկ օր/: Պրակտիկայի բազաներն են «Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ /մեթոդիստ՝ Ա.Հովհաննիսյան, մանկավարժ՝Ի.Բաբայան/ և «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ /մեթոդիստ՝ Ա.Դալլաքյան, մանկավարժ՝ Ն.Մարկոսյան/:
- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռակա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի **Սոցիալական մանկավարժություն մասնագիտության 4-րդ կուրսի** ուսանողների մանկավարժական պրակտիկան կկազմակերպվի 17.11.2022թ. մինչև 15.12.2022թ. /4 շաբաթ/: Պրակտիկայի բազան է «Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ /մեթոդիստ՝ Ա. Հովհաննիսյան, մեթոդիստ՝Ի. Բաբայան/:

Classroom հարթակում կստեղծվեն պրակտիկաների համար նախատեսված էլեկտրոնային էջեր, որտեղ կտեղադրվեն պրակտիկայի մեկնարկի համար անհրաժեշտ բոլոր նյութերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գ. Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և հանձնարարել պրակտիկայի մեթոդիստներին և մանկավարժներին կազմել համապատասխան աշխատանքային պլանները:

3. ԼՍԵՑԻՆ - «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության հարցաշարը հաստատելու մասին:

Ա. Թոփուզյան – Ասպիրանտուրայի բաժինը խնդրել է ներկայացնել «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության հարցաշարը՝ աշնանային քննաշրջանը կազմակերպելու համար: Հարցաշարը վերանայվել է և համապատասխանեցվել այս տարվա համանուն առարկայի ծրագրին: Խնդրում եմ ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն հարցաշարը հաստատելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյան, Լ. Նազարյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության ներկայացված հարցաշարը:

4. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի՝ որակի հանձնաժողովի նախագահ Լ. Նազարյանի հաղորդումը՝ 1-ին կիսամյակում դասավանդվելիք առարկաների մասին /Classroom/:

Լ. Նազարյան – Հարգելի դասախոսներ, տեղեկացնում ենք, որ մինչև ս.թ. սեպտեմբերի 15-ը բոլոր էլեկտրոնային դասընթացներում պետք է տեղադրված լինեն առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը, էլեկտրոնային մատյանները և մինչև այդ եղած դասախոսական նյութերը: Ս/թ սեպտեմբերի 17-ից սկսած Կրթության էլեկտրոնային կառավարման բաժինն իրականացնելու է մշտադիտարկում: Յուրաքանչյուր ամսվա 28-30-ը ամբիոններն իրականացնելու են Google Classroom հավելվածում էլեկտրոնային դասընթացների մշտադիտարկում, որոնց արդյունքները պետք է համակարգվեն և հաշվետվության տեսքով ներկայացվեն ԿԷԿ բաժին ամբիոնի որակի պատասխանատուի կողմից: Խնդրում եմ սահմանված ժամկետում տեղադրել բոլոր նյութերը համապատասխան դասընթացների էջերում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Խստորեն հետևել ժամկետներին և տեղադրել նյութերը: 2. Հանձնարարել Լ. Նազարյանին ներկայացնել հաշվետվություն Google Classroom հավելվածում էլեկտրոնային դասընթացների մշտադիտարկման վերաբերյալ յուրաքանչյուր ամսվա վերջում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

07.09.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 20-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Մ. Թադևոսյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Հակոբ Թադևոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը:

Օրակարգ

1. Ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող ուսանողների ատեստացիայի մասին:
2. ՍԿ ֆակուլտետի առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Սպարտակի Մանուկյանին մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանք գրելու թույլտվություն տալու մասին:
3. Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների թեզերի և բակալավր 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:
4. Մանկավարժության ամբիոնի հայցորդ Պէթթի Քիլէրճեանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող ուսանողների ատեստացիայի մասին:

Ա. Թոփուզյան – Նոյեմբեր ամսին նախատեսվում են հանդիպումներ ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ուսանողները պետք է ներկայացնեն հաշվետվություն ավարտական աշխատանքների և թեզերի շրջանակներում կատարած աշխատանքների վերաբերյալ: Խնդրում եմ հանդիպեք Ձեր ուսանողների հետ և նախապատրաստեք նրանց ատեստացիայի, որը տեղի կունենա ըստ հետևյալ գրաֆիկի.

- 17.11.2022թ. ժամը 11:00 — ՍԿ, հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրս
- 22.11.2022թ. ժամը 14:00 — ՍԿ, ԿՀՍ, առկա բակալավր 4-րդ կուրս
- 23.11.2022թ. ժամը 16:00 — ՍԿ, ԿՀՍ, առկա մագիստրատուրա 2-րդ կուրս
  02.12.2022թ. ժամը 14:00 — ՍԿ, ԿՀՍ, հեռակա բակալավր 5-րդ կուրս

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Ի. Բաբայան, Գ. Աղուզումցյան, Գ. Եգանյան, Լ. Պողոսյան, Ն. Մարկոսյան, Լ. Նազարյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող ուսանողների ատեստացիայի գրաֆիկը և պատրաստել ուսանողներին ատեստացիայի:

2. **ԼՍԵՑԻՆ**-2014-2015 ուս. տարում պետական ավարտական քննությունից անբավարար ստացած Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» մասնագիտության առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Սպարտակի Մանուկյանին մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանք գրելու թույլտվություն տալու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյան, Լ. Պողոսյան, Ա. Դալլաքյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Տրամադրել Մարիամ Սպարտակի Մանուկյանին ավարտական աշխատանքի թեմա և աշխատանքի ղեկավար նշանակել մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանին:

3. ԼՍԵՑԻՆ - Մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների թեզերի և բակալավր 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյան, Ա. Դալլաքյան, Մ. Ասատրյան, Գ. Հակոբյան, Գ. Հարությունյան, Ն. Մարկոսյան, Զ. Ասատրյան, Ի. Բաբայան, Ս. Սիսյան, Մ. Գևորգյան, Գ. Աղուզումցյան, Ա. Մանուկյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել ներքոհիշյալ ուսանողների ավարտական աշխատանքների և թեզերի թեմաների խորագրերը և ղեկավարների ցանկը:

Ավարտական աշխատանք ՄԿ, ԱԲ 4-րդ կուրս			
Հ/Հ	**ԹԵՄԱ**	**ԿԱՏԱՐՈՂ**	**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ**
1.	Կրտսեր դպրոցականների հետաքրքրությունների գնահատումը տարրական դպրոցում:	Մարտիրոսյան Սիրանուշ	Ա. Դալլաքյան
2.	Ուսուցանող (ձևավորող) գնահատման առանձնահատկությունները տարրական դպրոցում:	Ջաբուրյան Հռիփսիմե	
3.	Կրտսեր դպրոցականների սոցիալականացումը ՆՈՒՀ–ից դպրոց սահուն անցման պարագայում:	Մեսրոյան Իննեսա	
4.	Փոխներգործուն մեթոդների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցի ուսուցման գործընթացում:	Բաղալյան Շուշան	Մ. Ասատրյան
5.	Խրախուսանքի կիրառման սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները տարրական դպրոցում:	Կարապետյան Անի	Գ. Հակոբյան
6.	Ծնողի և ուսուցչի համատեղ աշխատանքի ազդեցությունը կրտսեր դպրոցականների առաջադիմության վրա:	Մինասյան Աննա	Գ. Հարությունյան
7.	Ուսումնական ֆիլմը՝ որպես ուսուցման զննական մեթոդ տարրական դասարաններում:	Խեպոյան Արմինե	Ն. Մարկոսյան

	Ավարտական աշխատանք **Սոց. մանկ., ԱԲ 4-րդ կուրս**		
Հ/հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1	Սոցիալական մանկավարժի դերը կրտսեր դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հարցում:	Յափունջյան Անի	Ա. Թոփուզյան
2	Սոցիալական մանկավարժի և դասվարի համագործակցությունը դպրոցականների սոցիալականացման գործընթացում:	Վարդանյան Գյուլնարա	
3	Բուլինգի հիմնախնդիրը և կանխարգելումը դեռահ-ասության տարիքում:	Դալլաքյան Նինա	Գ. Աղուզումցյան
4	Սոցիալական մանկավարժի աշխատանքը ընտանիքում:	Հունանյան Անի	Ա. Հովհաննիսյան
5	Խաղը որպես երեխայի սոցիալականացման միջոց:	Հովհաննիսյան Լեյլի	
6	Դեռահասների անձնային աճի շարժընթացը «Աջափնյակի երեխաների սոցիալական հոգածության» կենտրոնի օրինակով:	Սարգսյան Ալիսա	Ա. Դալլաքյան
7	Դեռահասների անվտանգ կրթական միջավայրի ապահովման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում:	Պետրոսյան Անուշ	Գ. Եգանյան

	Ավարտական աշխատանք **Սոց. մանկ. ՀԲ 5-րդ կուրս**		
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Իրավախախտ դեռահասի հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքի ձևերը:	Բարսեղյան Արմինե	Գ. Աղուզումցյան
2.	Սոցիալ-մանկավարժական գործունեությունը սկանդինավյան երկրներում և դրա տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում:	Գոհար Դարբինյան	Մ. Թադևոսյան
3.	Սոցիալական մանկավարժների մասնագիտացման հեռանկարները մեծահասակների կրթության բնագավառում:	Մարիամ Վարոսյան	Մ. Թադևոսյան
4.	Ազգային ավանդույթներն ու սովորույթները որպես կրտսեր դպրոցականների սոցիալականացման միջոց:	Հասմիկ Նալբանդյան	Գ. Հարությունյան
5.	Ընտանեկան դաստիարակության ազդեցությունը կրտսեր դպրոցականների	Մարիետա Գրիգորյան	Գ. Հարությունյան

	սոցիալականացման վրա:		

Ավարտական աշխատանք ՄԿ, ՀԲ 5-րդ կուրս			
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Խաղի դերը կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում:	Խաչատրյան Արմենուհի	Զ. Ասատրյան
2.	Դպրոց- ընտանիք համագործակցության ձևերը տարրական դպրոցում:	Խոստիկյան Ալիլյա	Ի. Բաբայան
3.	Դասի մանկավարժահոգեբանական վերլուծությունը տարրական դասարաններում:	Կիրակոսյան Մարինե	Ն. Մարկոսյան
4.	Ուսման մոտիվացիայի ձևավորումը տարրական դասարաններում:	Ասատրյան Անի	
5.	Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը արտադասարանական աշխատանքների միջոցով:	Կարմաջյան Մարիամ	Ս. Սիսյան
6.	Համակարգչային խաղերի կիրառման մանկավարժական պայմանները սովորողների ուսումնական գործունեության մեջ:	Աղեկյան Էմմա	Մ. Գևորգյան

ՄԿ, ԱՄ 1-ին կուրս			
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Ռեֆլեքսիան որպես դասվարի կարևոր կոմպետենցիա:	Խնկոյան Տաթևիկ	Ա. Թոփուզյան
2.	Մանկավարժական կանխատեսումը որպես դասվարի կարևոր հմտություն:	Հարությունյան Աննա	
3.	Կրտսեր դպրոցականի ուսումնական մոտիվացիայի ձևավորումը:	Ալեքսանյան Հասմիկ	Գ. Աղուզումցյան
4.	Հայրենասիրական դաստիարակության համակարգը տարրական դպրոցում:	Հարութունյան Սոնա	
5.	Թվային գրագիտության հիմնահարցը տարրական դպրոցում:	Դավթյան Լուիզա	Գ. Հարությունյան
6.	Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը տարրական դպրոցում:	Եղիազարյան Մերինե	Ի. Բաբայան
7.	21-րդ դարի ուսուցչի մասնագիտական հմտությունները:	Ծատուրյան Լիլիթ	
8.	Կրտսեր դպրոցականի հաղորդակցման կարողությունների ձևավորման ուղիները:	Թումանյան Հայարփի	Ս. Սիսյան
9.	Հեռավար կրթության առանձնահատկությունները մագիստրոսական կրթության ընթացքում:	Հովհաննիսյան Մարինե	

ԿՀՍ, ԱՄ 1-ին կուրս			
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում սոցիալական մանկավարժի ինստիտուտի զարգացման ուղիները:	Պետրոսյան Մարգարիտա	Ա. Թոփուզյան
2.	Եռամսյա հավաքների մասնակից պահեստազորայինների բարոյամարտական որակների ձևավորման սոցիալ-մանկավարժական ուղիները:	Դավթյան Մերուժան	Ա. Հովհաննիսյան
3.	Սովորողների սոցիալ-իրավական պաշտպանվածությունը դպրոցում:	Բաղդասարյան Սոնա	Գ. Հարությունյան
4.	Ռազմական բուհերում սպաների պատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացման սոցիալ - մանկավարժական ուղիները:	Բաբերյան Տիգրան	Գ. Եգանյան
5.	ԿԱՊԿՈՒ երեխաների հետ մանկավարժական բուհերի ուսանողների պատրաստվածության առանձնահատկությունները:	Ափինյան Մարիամ	Ն. Մարկոսյան
6.	ՀՀ զինված ուժերում սերժանտների պատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացման սոցիալ մանկավարժական ուղիները:	Համբարձումյան Տարոն	Լ. Նազարյան
7.	Միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում սոցիալ-մանկավարժական բաղադրիչի զարգացման ուղիները:	Սարիբեկյան Շարմաղ	Հ. Թադևոսյան

ՍԿ, ՀՄ 1-ին կուրս			
Հ/Հ	ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Միջառարկայական կապերի կիրառումը կրտսեր դպրոցականի էկոլոգիական գիտելիքների ձևավորման գործում:	Ղազարյան Ռիտա	Գ. Հակոբյան
2.	Խաղային տեխնոլոգիաները տարրական դպրոցում:	Զաքարյան Արմենուհի	Ա. Հովհաննիսյան
3.	Ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողությունը դպրոցում:	Զաքարյան Հասմիկ	
4.	Ժամանակակից ուսուցչի կերպարն ու դրա դերը արդի կրթական համակարգում:	Քերոբյան Ռուբինա	Ն. Մարկոսյան
5.	Կրտսեր դպրոցականի ինքնուրույնության ձևավորման առանձնահատկությունները ուսուցման գործընթացում:	Մարգարյան Նազիկ	Լ. Նազարյան
6.	Զարգացնող կրթական միջավայրի ապահովման	Բաղինյան Գայանե	Գ. Եգանյան

	հիմնախնդիրը տարրական դպրոցում:		
7.	Ժամանակակից տեխնոլոգիաների և էլեկտրոնային ուսումնական նյութերի դերը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում:	Խաչատրյան Հրաչուհի	Մ. Ասատրյան
8.	Մեծահասակների մեդիագրագիտության ձևավորման մանկավարժահոգեբանական նախադրյալները:	Նալբանդյան Եվա	Ա. Մանուկյան
9.	Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը մանկավարժական տեխնոլոգիաների միջոցով:	Թանանյան Տաթև	Գ. Աղուզումցյան
10.	Թվային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում քաղաքացիական կրթության նպատակով:	Բաբայան Լիլիթ	Մ. Թադևոսյան
11.	Բուլլինգի հիմնախնդիրները տարրական դպրոցում:	Գևորգյան Մելինե	
12.	Ժամանակակից դասրին ներկայացվող առողջագիտական պահանջները:	Ահարոնյան Արաքսյա	Մ. Մանուկյան

4. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդ Պէթթի Քիլէրճեանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Ա. Մանուկյանը, Ն. Մարտիրոսյանը, Լ. Պողոսյանը, Գ. Եգանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Պէթթի Քիլէրճեանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Կրտսեր դպրոցականի դաստիարակվածության դիագնոստիկան տարրական դպրոցում»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Եգանյանին:

Ամբիոնի նիստի 23 անդամներից ներկա էին 20-ը, որից կողմ քվեարկեց 20-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

19.10.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 21-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը:

Օրակարգ

1. «Մանկավարժական մարդաբանություն», «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն», «Ընդհանուր մանկավարժություն» առարկաների վերանայված ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:
2. «Մեդիագրագիտություն» խորագրով ամբիոնի դասախոսների վերապատրաստման դասընթացի ամփոփման մասին:
3. ՍԿ ֆակուլտետի երկտարեցի ուսանողուհիներ Մարիամ Մանուկյանի և Աստղիկ Իսրայելյանի ավարտական աշխատանքների և ղեկավարների հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - «Մանկավարժական մարդաբանություն», «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն», «Ընդհանուր մանկավարժություն» առարկաների վերանայված ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:

Լ. Նազարյան – Վերանայվել է «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը: Հիմնական փոփոխությունները կատարվել են գործնական աշխատանքների և առաջադրանքների բովանդակության մեջ: Մասնավորապես, գործնական աշխատանքներից մեկը նվիրված է «Կրթություն 2050» տեսլականը և արհեստական ինտելեկտը» թեմային, որտեղ քննարկվելու են կայուն զարգացման հայեցակարգի 4-րդ նպատակը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն և «Կրթություն 2050» տեսլականը, արհեստական բանականությունը և կրթության համակարգի ապագան, Պեկինի եզրակացությունները և դրանց հետ կապված կրթական քաղաքականության զարգացման խնդիրները: Հաջորդ գործնական աշխատանքը «Մանկության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով խնդրահենք նախագիծ է, որի շրջանակներում ուսանողները հետազոտում և ներկայացնում են մանկության ժամանակակից որևէ հիմնախնդրի առկա վիճակը ՀՀ-ում, տալիս են դրա լուծման առաջարկներ, որոնք ուղղված են այդ հարցով զբաղվող մարմնին: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև առաջարկվող գրականության ցանկում, ավելացվել են մեր դասախոսների հեղինակային հոդվածները քննարկվող հարցերի վերաբերյալ:

Ի. Բաբայան - Վերանայվել և լրամշակվել է «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը: Մասնավորապես, վերաձևակերպել ենք առարկայի նպատակը և հստակեցրել վերջնարդյունքները՝ համապատասխանեցնելով այն մասնագիտությունների վերջնարդյունքներին, որտեղ կարդացվում է տվյալ դասընթացը: Վերանայվել են նաև գործնական աշխատանքների մեթոդներն ու բովանդակությունը: Առաջին գործնական աշխատանքը մոդելավորում է, որի շրջանակներում մագիստրոսները պետք է ձևակերպեն իրենց թեզի թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան և դրանք ներկայացնեն մոդելի տեսքով: Հաջորդ գործնական աշխատանքը նախագիծ է, որի շրջանակներում լսարանը բաժանվում է 3 խմբի, յուրաքանչյուր խումբ համապատասխանաբար մշակում է նախագծի թեմայի ենթաթեմաներից մեկը, գտնում է հիմնախնդրի լուծման եղանակները: Մոդելավորում է դրանց քայլաշարը և ներկայացնում է լսարանին: 3-րդ գործնականը հետազոտական աշխատանք է, որի

շրջանակներում ուսանողները՝ իրենց թեզի թեմայից ելնելով, պետք է իրականացնեն էմպիրիկ մեթոդներով հետազոտություն՝ հարցում, զրույց, դիտում և այլն: Դասախոսության թեմաներում ավելացվել է «Հետազոտողի ակադեմիական ազնվությունը: Հակապլագիատային ծրագրեր» թեման, որը իր մեջ ներառում է «Ցիտման նորմերի և գրագողության մասին կանոնակարգ»-ի ուսումնասիրություն, հակապլագիատային ծրագրերի ուսումնասիրություն և փորձարկում, հետազոտողի ակադեմիական ազնվության մոդելի մշակում:

Լ. Ասատրյան – Վերանայվել է «Ընդհանուր մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը: Առարկան դասավանդվում է ՀՊՄՀ բոլոր ֆակուլտետներում, ուստի գործնական աշխատանքները և առաջադրանքները մշակվել են՝ հաշվի առնելով տվյալ մասնագիտության առանձնահատկությունը: Առարկայի վերջնարդյունքները համապատասխանեցվել են մասնագիտության վերջնարդյունքներին: Ըստ նախնական պայմանավորվածության, ուսումնամեթոդական փաթեթում ավելացվել են կրթության բնագավառի օրենսդրությանը և հանրակրթական պետական չափորոշիչներին վերաբերող որոշ թեմաներ: Արդիականացվել է գրականության ցանկը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Լ. Պողոսյան, Ս. Սիսյան, Գ. Հարությունյան, Ս. Ջանիկյան, Գ. Հակոբյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել «Մանկավարժական մարդաբանություն», «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն», «Ընդհանուր մանկավարժություն» առարկաների վերանայված ուսումնամեթոդական փաթեթները: Մեկ անգամ ևս ստուգել դրանց բովանդակային և գործնական համապատասխանությունը տվյալ մասնագիտացման վերջնարդյունքներին և ՛՛մանկավարժություն՛՛ ոլորտային շրջանակի պահանջներին:

2. ԼՍԵՑԻՆ - «Մեդիագրագիտություն» խորագրով ամբիոնի դասախոսների վերապատրաստման դասընթացի ամփոփման մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ հոկտեմբերի 26-ին ՀՊՄՀ-ի և Դի-Վի-Վի ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի համագործակցության շրջանակներում մեկնարկեց «Մեդիագրագիտություն» խորագրով ամբիոնի դասախոսների վերապատրաստման դասընթացը, որի արդյունքներն ամփոփվեցին ս/թ նոյեմբերի 16-ին՝ նախագծային աշխատանքով: Վերապատրաստմանը մասնակցում էին ինչպես դասախոսներ, այնպես էլ ասպիրանտներ և հայցորդներ: Վերապատրաստման ընթացքում իրականացվեց 6 հանդիպում, որի շրջանակներում քննարկվեցին մեդիային, մեդիագրագիտությանը, քննադատական մտածողությանը, մեդիատեղեկատվության հավաստիությանը, անձնական տվյալների գաղտնիությանը վերաբերող մի շարք հարցեր: Անդրադարձ եղավ նաև ապատեղեկատվությանը, քարոզչությանը, փաստերի ստուգման գործիքներին: Դասընթացավարներն էին մեր ամբիոնի դոցենտներ Լ. Պողոսյանը և Գ. Հարությունյանը, ովքեր մեկ տարի առաջ մասնակցել էին համանուն վերապատրաստմանը: Կային նաև հրավիրված դասընթացավարներ: Դասընթացն ավարտվեց «Մեդիան բուհի ուսուցման գործընթացում» թեմայով նախագծով, որին մասնակցեցին բոլոր ունկնդիրները: Դասընթացի ավարտին բոլոր մասնակիցները ստացան հավաստագրեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Լ. Պողոսյան, Գ. Հարությունյան, Մ. Գևորգյան

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Շնորհակալություն հայտնել Լ. Պողոսյանին և Գ. Հարությունյանին՝ կատարած աշխատանքի համար: 2. Կատարել փոփոխություններ դասավանդվող բոլոր առարկաների գործնական աշխատանքների մեթոդների ընտրության հարցում՝ մեդիագործիքները տվյալ առարկայի ուսուցման գործընթացում օգտագործելու նպատակով: 3. Վերապատրաստման արդյունքներով վերանայել և հարստացնել ՛՛Անդրագոգիկա՛՛, ՛՛Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում՛՛, ՛՛Մեդիակրթություն՛՛ դասընթացների բովանդակությունը:

3. ԼՍԵՑԻՆ-2014-2015 ուս. տարում պետական ավարտական քննությունից անբավարար ստացած Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» մասնագիտության առկա բակալավր 4-րդ կուրսի

ուսանողուհի Մարիամ Սպարտակի Մանուկյանի ավարտական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյան, Լ. Պողոսյան, Ա. Դալլաքյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Մարիամ Սպարտակի Մանուկյանի ավարտական աշխատանքի թեման՝ հետևյալ ձևակերպմամբ. «Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը տարրական դպրոցում»: Գիտական ղեկավար նշանակել մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանին:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարում՝ տարկետումից վերադարձած, Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանք գրող հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Իսրայելյանի ավարտական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյանը, Գ. Հակոբյանը, Ս. Ջանիկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Աստղիկ Իսրայելյանի ավարտական աշխատանքի թեման՝ հետևյալ ձևակերպմամբ. «Խաղը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց տարրական դպրոցում»: Գիտական ղեկավար նշանակել մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

16.11.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 20-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Արմենուհի Մանուկյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը

Օրակարգ

1. Մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացքի մասին:
2. Ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի անցկացման մասին:
3. ՀՀ ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ իրականացնելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացքի մասին:

Գ. Հարությունյան – Ավարտվեց մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկան: Մասնավորապես.

- **Սոցիալական մանկավարժություն,** առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի պրակտիկան անցկացվել է 20.10.2022թ. մինչև 09.11.2022թ. /3 շաբաթ/: Պրակտիկայի բազան եղել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ԿՀՍ ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի 1-4-րդ կուրսերը: Մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատական:
- **Տարրական մանկավարժություն և մեթոդիկա,** առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի պրակտիկան անցկացվել է 20.10.2022թ. մինչև 09.11.2022թ. /3 շաբաթ/: Պրակտիկայի բազան եղել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ՍԿ ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի 1-4-րդ կուրսերը: Մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատական:
- **Տարրական մանկավարժություն և մեթոդիկա,** հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսի պրակտիկան անցկացվել է 10.11.2022թ. մինչև 23.11.2022թ. /2 շաբաթ/ Պրակտիկայի բազան եղել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ՍԿ ֆակուլտետի բակալավրիատի կրթական ծրագրի 1-4-րդ կուրսերը: Մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքում 1 ուսանող չի հաղթահարել անցողիկ շեմը:

Մանկավարժահետազոտական պրակտիկայի բարելավման համար ներկայացնում ենք մի քանի առաջարկություն.

- Մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման համար բացի տվյալ մասնագիտության բակալավրի հենքից մագիստրոսների պրակտիկաների բազաների ստեղծում, որը հնարավորություն կտա մագիստրոսական թեզի շրջանակներում հետազոտական աշխատանքներ իրականացնել, այսինքն, մագիստրոսների համար պրակտիկայի բազաներ դարձնել նաև հանրակրթական դպրոցները, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները և այլն:

- Մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկաների իրականացման ժամանակացույցի կարգավորում, քանի որ կիսամյակում մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկաներին հատկացված ժամանակահատվածը համընկնում է բակալավրի կրթական ծրագրի ակտիվ պրակտիկաների /կիրառական, ամփոփիչ/, միջանկյալ ստուգումների ժամանակահտվածին, որը հնարավորություն չի տալիս լիարժեք ընդգրկել բակալավրի հենքի բոլոր կուրսերը, առաջարկում ենք մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկան անցկացնել 1-ին միջանկյալ ստուգման շաբաթից առաջ կամ հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Գ. Հարությունյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել պրակտիկաներում ընդգրկված բոլոր մանկավարժներին և մեթոդիստներին ներկայացնել հաշվետվություն և առաջարկություններ պրակտիկաների ավարտից հետո՝ ամբիոնի նիստում հաստատելու համար: Ներկայացված առաջարկությունները փոխանցել ՀՊՄՀ պրակտիկայի բաժին:

2. ԼՍԵՑԻՆ - Ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի անցկացման մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ նոյեմբերի 30-ին նախատեսվում է անցկացնել ասպիրանտների և հայցորդների ատեստացիա: Հայցորդները և ասպիրանտները պետք է ներկայացնեն գրավոր հաշվետվություն հայցորդական և ասպիրանտական տարիների ամբողջ ընթացքի մասին: Մասնավորապես, որ մինիմումներն են հանձնել, տպագրված հոդվածների մասին տվյալներ, գիտաժողովների, սեմինարների, վերապատրաստումների մասնակցության մասին տեղեկատվություն, թեմայի շրջանակներում ուսումնասիրած գրականության ցանկ, ատենախոսության պատրաստվածության աստիճանի մասին տեղեկատվություն: Ղեկավարները պետք է գնահատեն հայցորդի կամ ասպիրանտի կատարած աշխատանքը և ներկայացնեն երաշխավորություն՝ նրանց ատեստավորելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Ա. Հովհաննիսյան, Ի. Բաբայան

ՈՐՈՇԵՑԻՆ - Ասպիրանտների և հայցորդների ատեստացիան անցկացնել 30.11.2022թ.:

3. ԼՍԵՑԻՆ - ՀՀ ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ իրականացնելու մասին:

Ա. Թոփուզյան - Սույն թվականի դեկտեմբերի 1-27-ը անհրաժեշտ է կատարել այցելություններ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ավագ դպրոցներ՝ մասնագիտական կողմնորոշում իրականացնելու նպատակով: Խնդրում ենք համապատասխան դպրոցների և այցելությունների օրվա մասին տեղեկատվությունը ուղարկել ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դպրոցներ այցելությունների գրաֆիկը ուղարկել ամբիոն մինչև 26.11.2022թ.:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

23.11.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 18-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիայանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը

Օրակարգ

1. Մանկավարժության ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:
2. Մանկավարժության ամբիոնի հայցորդ Պարույր Գալստյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:
3. Ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող ուսանողների հետ հանդիպումների արդյունքների մասին:
4. «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծերի համահամալսարանական մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին:
5. 2022թ. դեկտեմբերի 21-ի ամբիոնի նիստի կազմակերպման և անցկացման մասին:

1. **ԼՍԵՑԻՆ –** Մանկավարժության ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյան, Լ. Ասատրյան, Լ. Պողոսյան, Ա. Մանուկյան, Ի. Բաբայան, Ա. Հովհաննիսյան, Գ. Եգանյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել ներքոհիշյալ հայցորդներին և ասպիրանտներին՝ ատենախոսության թեմայի շրջանակներում 2022թ. կատարած աշխատանքների հիման վրա: /հաշվետվությունները կցվում են/

1. Գինոսյան Սյուզաննա /ասպիրանտ/
2. Կոստանյան Էմմա /ասպիրանտ/
3. Հովակիմյան Անահիտ /ասպիրանտ/
4. Ավետիսյան Լորեթա /հայցորդ/
5. Դուրգարյան Ալեսա/հայցորդ/
6. Մարգարյան Թինա /հայցորդ/
7. Ղահրամանյան Շուշանիկ /հայցորդ/
8. Կարապետյան Արմինե /հայցորդ/
9. Երիցյան Գոհար /հայցորդ/
10. Քիլէրճեան Պէթի /հայցորդ/
11. Գալստյան Պարույր /հայցորդ/
12. Զաքարյան Թագուհի /հայցորդ/

2. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդ Պարույր Գալստյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Ա. Մանուկյանը, Հ. Թադևոսյանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Պարույր Գալստյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Ուսանողական ինքնակառավարման մարմինները որպես ապագա

մանկավարժի առաջնորդության որակների ձևավորման միջոց»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հակոբ Թադևոսյանին:

Ամբիոնի նիստի 23 անդամներից ներկա էին 18-ը, որից կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ - Ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող ուսանողների հետ հանդիպումների արդյունքների մասին:

Ա. Թոփուզյան – Ըստ նախապես հաստատված գրաֆիկի ս/թ նոյեմբերի 17-ին, 22-ին, 23-ին հանդիպել եմ ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետների ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող ուսանողների հետ: Արդյունքներն այնքան էլ գոհացնող չեն: Կային ուսանողներ, ովքեր գաղափար չունեին ինչի մասին է իրենց աշխատանքը, թեմայից բխող հասարակ հարցերին չէին կարողանում պատասխանել: Ուսանողի աշխատանքը փոխներգործուն մեթոդների մասին է, մինչդեռ չգիտի ինչ ասել է փոխներգործուն մեթոդ, ուսանողների կեսից ավելին չգիտեր իր աշխատանքի նորույթը որն է լինելու: Ուսանողների հետ աշխատելիս սկսեք թեմայից, ուսանողը պետք է թեմայի մեջ լինի, իմանա թեմայի յուրաքանչյուր բառի նշանակությունն ու արժեքը, պետք է իմանա, որ այդ յուրաքանչյուր բառի արձագանքը պետք է ամփոփված լինի աշխատանքի նպատակում, պետք է հասկանա, որ խնդիրները պետք է բխեն նպատակից, եզրակացություններն էլ պետք է պատասխանեն խնդիրներին: Այլապես աշխատանքը չի կարող ամբողջական լինել: Յուրաքանչյուրի հետ մանրամասն աշխատել եմ, հստակ դիտարկումներ և ուղղորդումներ եմ արել: Հանդիպեք Ձեր ուսանողների հետ՝ աշխատանքներում առկա թերությունները շտկելու և աշխատանքի 2-րդ գլուխը՝ հետազոտությունը ամփոփելու և շարադրելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Լ. Պողոսյան, Մ. Ասատրյան, Գ. Հակոբյան, Գ. Հարությունյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստացիայի 2-րդ փուլը անցկացնել մարտին:

4. ԼՍԵՑԻՆ - «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծերի համահամալսարանական մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին:

Ա. Թոփուզյան – Մեր ամբիոնը, ՀՊՄՀ թանգարանի և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ միասին հայտարարում են ուսանող – դասախոս նախագծային աշխատանքների համահամալսարանական մրցույթ՝ նվիրված ՀՊՄՀ հիմնադրման 100 ամյակին: Մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ բոլոր ուսանողները, ասպիրանտները, հայցորդները և դասախոսները: Պարտադիր պայմանն այն է, որ յուրաքանչյուր խմբում պետք է լինեն առնվազն մեկ դասախոս և 5 ուսանող: Մեր ամբիոնի բոլոր դասախոսները պետք է մասնակցեն այս մրցույթին՝ ներկայացնելով նախագծեր իրենց դասավանդած կուրսերի ուսանողների հետ համատեղ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մասնակցության հայտն ուղարկել ամբիոն՝ 2022թ.-ի դեկտեմբերի 22-ից մինչև 2023թ.-ի հունվարի 10-ը: Նախագծի կատարման և ամբողջական բովանդակության մասին փաթեթը ամբիոն ներկայացնել մինչև 2023 թվականի ապրիլի 1-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Հակոբյան, Ս. Սիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծերի համահամալսարանական մրցույթ անցկացնելու կարգը: /Կցվում է/

2. Սահմանված ժամկետներում ներկայացնել մրցույթի մասնակցության հայտերը և ամբողջական նախագծերը:

5. ԼՍԵՑԻՆ - 2022թ. դեկտեմբերի 21-ի ամբիոնի նիստի կազմակերպման և անցկացման մասին:

Ա. Թոփուզյան – Հարգելի գործընկերներ, ս/թ դեկտեմբերի 21-ին տեղի է ունենալու ՀՊՄՀ-ի 100-ամյակին նվիրված մեր ամբիոնի վերջին՝ ամփոփիչ միջոցառումը, որը

առաջարկվում է անցկացնել ամբիոնի ընդլայնված նիստի ձևաչափով: Ձեր քննարկմանն ենք ներկայացնում հետևյալ օրակարգը.

1. Ամբիոնի վերջին տասնամյակի գործունեության մասին հաշվետվություն՝ տեսահոլովակի ներկայացում, որը կպատրաստեն Գ. Հարությունյանը և Է. Յարազյանը: Տեքստը՝ Ա. Թոփուզյանի:
2. Ամբիոնի դասախոսների կողմից պատրաստված մանկավարժական ուսումնա-մեթոդական գրականության ցուցահանդես, որի պատասխանատուն կլինի Ա. Բաբայանը:
3. Հրավիրվածների ապահովում և պարգևատրվողների գործերի պատրաստում կիրականացնեն Ա. Թոփուզյանը և Է. Յարազյանը:
4. Հենակետային 104 դպրոցի սովորողների և մեր շրջանավարտ ուսուցիչների ողջույն, որը կպատրաստի Ն. Մարտիրոսյանը:
5. Մասնակից հյուրերի պարգևատրում՝ Գ. Եգանյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 21.12.2022թ. ամբիոնի նիստի օրակարգն ու այն իրականացնողների ցանկը: Խնդրել բոլորին մինչև 19.12.2022թ. ամբիոն ներկայացնել վերջին տասնամյակում գրված ուսումնամեթոդական գրականությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱԶՅԱՆ

30.11.2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 20-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ.դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն.Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ. դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ. դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ. դասախոս Ն. Մարկոսյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը

Օրակարգ

1. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

1. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարում Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 3-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Լ.Պողոսյան, Ս. Սիսյան, Գ. Հակոբյան, Ի. Բաբայան, Ա. Մանուկյան, Ա. Հովհաննիսյան, Ն. Մարտիրոսյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Թույլատրել ներքոհիշյալ ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների հրապարակային պաշտպանությունը:

Հ/Հ	ԹԵԶԻ ԹԵՄԱ	ԿԱՏԱՐՈՂ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Դերային և դիդակտիկ խաղերը տարրական դպրոցում:	Նազարյան Սոֆյա	Ա. Հովհաննիսյան
2.	Դասվարի աշխատանքը կրտսեր դպրոցականների ռեժիմի կարգավորման գործում:	Խանդամիրյան Ալլա	Ն. Մարտիրոսյան
3.	Մանկավարժական աջակցման տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում:	Հարությունյան Մանե	Ի. Բաբայան
4.	Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական ռեֆլեքսիայի ձևավորումը՝ որպես դասավանդողի մասնագիտական կարևոր հատկանիշ:	Ադամյան Նարինե	Ս. Սիսյան
5.	Ուսուցման սկզբունքների կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում:	Աթանյան Լիլիթ	Գ. Աղուզումցյան
6.	Կրտսեր դպրոցականի առաջնորդական որակների ձևավորումը ուսումնական գործընթացում:	Գևորգյան Անի	Լ. Նազարյան
7.	Շախմատի ուսուցման դժվարությունները և նրա հաղթահարման ուղիները տարրական դպրոցում:	Գևորգյան Վարդուհի	Լ. Ասատրյան
8.	Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերն ու միջոցները տարրական դպրոցի սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում:	Պետրոսյան Գոհար	Լ. Ասատրյան
9.	Մեդիատեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման	Առաքելյան Տաթևիկ	Լ. Պողոսյան

	գործում:		
10.	Կրտսեր դպրոցականի շեղվող վարքի կանխարգելման սոցիալ-մանկավարժական պայմանները:	Թումանյան Ելենա	Ա. Մանուկյան
11.	Ուսումնական միջավայրին կրտսեր դպրոցականների հարմարման մանկավարժական պայմանները:	Պողոսյան Սոնա	Գ. Հակոբյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

22.12.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 19-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ.դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն.Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Նազարյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ. դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ. դասախոս Ն. Մարկոսյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ. դոցենտ Զարուհի Ասատրյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը:

Օրակարգ

2. ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված ամբիոնի միջոցառումների ամփոփման մասին:
3. 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:
4. Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին:
5. 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի պրակտիկայի ամփոփման մասին հաշվետվությունը: /կցվում է/

1. ԼՍԵՑԻՆ - ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված ամբիոնի միջոցառումների ամփոփման մասին:

Ա. Թոփուզյան – Սիրելի դասախոսներ, ավարտվեցին ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված ամբիոնի միջոցառումները: 21.12.2022թ. կայացավ մեր ամբիոնի ընդլայնված նիստը, որը նվիրված էր ՀՊՄՀ 100-ամյակին: Նիստին մասնակցում էին մեր բուհի ռեկտորը, պրոռեկտորները, ֆակուլտետների դեկաններ, վարչության պետեր, ամբիոնի ողջ պրոֆեսորադասախոսական կազմը, հենակետային դպրոցների տնօրեններ, շրջանավարտ-ուսուցիչներ, ովքեր մշտապես աջակցել են ամբիոնի աշխատանքներին: Օրակարգում ՀՊՄՀ «Մանկավարժության» ամբիոնի գործունեության վերջին տասնամյակի հաշվետվությունն էր, որը ներկայացվեց տեսահոլովակով: Նիստից առաջ բոլոր ներկաները ունկնդրեցին ամբիոնի դասախոսների կողմից գրված ուսումնամեթոդական մանկավարժական գրականության ցուցահանդեսը: Բուհի մեկդարյա հոբելյանի առթիվ պարգևատրվեցին ամբիոնի բոլոր դասախոսները: Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը համալսարանական կրթության զարգացման, երիտասարդ մասնագետների պատրաստման գործում ունեցած նշանակալի ավանդի համար «Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրեց ամբիոնի դոցենտներ Սուսաննա Սիսյանին, Գայանե Աղուզումցյանին և Հակոբ Թադևոսյանին: Մասնագիտական գործունեությունը բարեխիղճ և արդյունավետ կատարելու, երիտասարդ մասնագետների պատրաստման գործում ունեցած ներդրման համար՝ ամբիոնի դասախոսներն արժանացան պատվոգրերի և շնորհակալագրերի: Ամբիոնի հենակետային՝ Երևանի թիվ 104 դպրոցի սովորողները ՀՊՄՀ շրջանավարտ իրենց ուսուցիչների և դպրոցի տնօրենի՝ Նաիրա Մարտիրոսյանի հետ ողջունեցին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին և ամբիոնին նվիրեցին իրենց ձեռքի աշխատանքները:

2022թ. դեկտեմբերի 27-ին կայացավ բուհի գիտական խորհրդի տարեվերջյան նիստը, որի ընթացքում բուհի բարձրագույն՝ «Խաչատուր Աբովյան» մեդալ շնորհվեց մեր ամբիոնի պրոֆեսորներ Աիդա Թոփուզյանին և Մնացական Մանուկյանին, «Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրվեցին դոցենտներ Գ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը:

Ուզում եմ զեկուցել նաև, որ նախատեսված բոլոր միջոցառումները կատարվել են, անցկացվել են ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված ուսանողական քարոզների և տեսահոլովակների մրցույթը ՝՝Իմ համալսարանը 100 տարեկան է՝՝ խորագրով, (հաղթողներ՝ Արուս Այվազյան, Լուսինե Մակինյան, Մարիամ Եփրեմյան), ավագ դպրոցականների ՝՝մանկավարժություն՝՝-ից հանրապետական օլիմպիադան, որին մասնակցեցին հանրապետության բոլոր մարզերից 506 ավագ դրոցականներ, ուսանող-դասախոս համատեղ գիտական կոնֆերանսը, որը ապահովեց ուսանող-դասախոս համագործակցությունը, հետազոտությունների և դրանց արդյունքների համատեղ վերլուծության կոմպետենցիաների ձևավորումը, ուսանողների մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից մշակված դիդակտիկ նյութերի ցուցահանդես-հաշվետվությունը, հենակետային դպրոցներում անցկացված ցերեկույթներն ու հանդեսները, հատուկ ուզում եմ շեշտել Աբովյան քաղաքի, Խ. Աբովյանի անվան ավագ դպրոցի սաների թատերական խմբի ելույթը ՀՊՄՀ-ում: Այս ամենի մասին հիշողությունը հավերժ կմնա մեր մեջ: Առանձնակի ուզում եմ շեշտել, որ դեկտեմբերի 21-ի նիստում հայտարարեցինք նաև ՝՝Ուսյալ ազգի վկայագրերը՝՝ թեմայով համալսարանական ուսանող-դասախոս միասնական նախագծերի մրցույթի մեկնարկի մասին, որն ամբիոնն անցկացնում է ՀՊՄՀ-ի թանգարանի և ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ միասին: Այսինքն, մեր աշխատանքը շարունակվում է, ամբիոնի նախաձեռնությունները շարունակական են, ամբիոնը մշտապես հավատարիմ է իր առաքելությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Հովհաննիսյան, Գ. Հակոբյան, Ս. Սիսյան, Գ. Եգանյան

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված բոլոր նյութերը մշակել և ի պահ հանձնել ՀՊՄՀ թանգարանին:

2. ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Պատրաստ է 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը: Խնդրում եմ ծանոթացեք և եթե չկան լրացումներ, առաջարկում եմ հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանը: /Կցվում է/

3. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան - Ամբիոնում կազմվել է 2022-2023 ուս. տարվա մշտական գործող սեմինարի գրաֆիկը՝ ներկայացված թեմաների հիման վրա: Խնդրում եմ խստորեն հետևել գրաֆիկի կատարմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ամբիոնում մշտական գործող սեմինարի 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի գրաֆիկը: Սեմինարը վարելու համար հրավիրել նաև հանրապետության լավագույն մանկավարժներին: /կցվում է/

4. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի պրակտիկայի մասին հաշվետվությունը:

Գ. Հարությունյան - 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում ունեցել ենք պրակտիկաներ առկա բակալավր 3-րդ, հեռակա բակալավր 4-րդ, առկա մագիստրատուրա 2-րդ, հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների շրջանում: Ամբիոնի կողմից իրականացվել են պրակտիկայի կազմակերպում, բազաների ընտրություն, ընթացիկ հարցերի կարգավորում, գործընթացի վերահսկողություն, մանկավարժական պրակտիկաների /բակալավրիատ և մագիստրատուրա/ նկարագրերի, թղթապանակի, աշխատանքային պլանների, բաշխման նյութերի ստեղծում և վերանայում, պրակտիկաների համար classroom- էլ հարթակների ստեղծում և մշտադիտարկում: 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի պրակտիկայի շրջանակներում ընդգրկված դասախոսներ Ա.Հովհաննիսյանը, Ի.Բաբայանը, Ա.Դալլաքյանը, Ն.Մարկոսյանը, Գ.Աղուզումցյանը, Գ.Եգանյանը դրսևորել են

պարտաճանաչություն և պատասխանատվություն, վայելել են ուսանողների սերն ու հարգանքը՝ գրանցելով բարձր ու դրական արդյունք։

Հաջողված փորձի օրինակներ.

- Պրակտիկայի հաստատությունների հետ երկարատև համագործակցություն /Մանկավարժության ամբիոնը երկար տարիներ համագործակցում է Երևանի թիվ 104 հիմնական դպրոցի և Երևանի Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 հիմնական դպրոցի հետ, ինչպես նաև «Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնի ու ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի հետ:
- Պրակտիկայի նոր բազաների համալրում /«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությունը սկսել ենք 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակից/
- Ուսանողների մասնագիտական գործունեություն իրականացնելու հնարավորություն և թեմատիկ տարբեր սեմինար-քննարկումների, միջոցառումների մասնակցություն։ Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների և պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների փոխադարձ կապի ապահովում։ Պրակտիկայի շրջանակներում ընդգրկված բոլոր բազաները մեր ուսանողներին հնարավորություն են տալիս իրականացնելու տարաբնույթ սեմինար-քննարկումներ ու միջոցառումներ, մասնավորապես 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում թեմատիկ քննարկումներ և ամփոփիչ միջոցառումներ ուսանողներն իրականացրել են «Երևանի թիվ 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում և «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ում։
- Պրակտիկաներից հետո ուսանողների կամավորական աշխատանքների իրականացման հնարավորություն /ուսանողներին կամավորական աշխատանքներ իրականացնելու հնարավորություն է տվել Երևանի թիվ 104 հիմնական դպրոցը, ինչպես նաև այդ հարցում աջակցել են Աջափնյակ վարչական շրջանի երեխաների

սոցիալական հոգածության կենտրոնն ու ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնը/։

Դժվարություններ, խնդիրներ.

- Դասախոսների ծանրաբեռնվածություն,
- Ժամանակի սակավություն, /շարունակական պրակտիկայի ընթացքում պրակտիկայի հաստատություն շաբաթական մեկ այցը հնարավորություն չի տալիս ուսանողներին լիարժեք ներգրավվել աշխատանքի մեջ և տեսնել ու իրականացնել ամբողջական մասնագիտական գործունեություն/,
- Համապատասխան մասնագետների առկայությամբ պրակտիկաների բազաների սակավություն /սոցիալական մանկավարժի հաստիքի բացակայություն բազմաթիվ դպրոցներում/։ Համընդհանուր ներառականության պայմաններում սոցիալական մանկավարժություն մասնագիտությամբ ուսանողների պրակտիկայի կազմակերպման դժվարություն դպրոցներում, քանի որ ներառականության նոր համակարգի փոփոխության արդյունքում դպրոցներում սոցիալական մանկավարժի հաստիքը փոխարինվել է ուսուցչի օգնականի հաստիքով, ով իր գործառույթներից ելնելով լիարժեք սոցիալ-մանկավարժական գործունեություն չի իրականացնում։
- Տարբեր մասնագիտությունների առկա և հեռակա համակարգում սովորող ուսանողների /բակալավրիատ և մագիստրատուրա/ մանկավարժական պրակտիկաների կազմակերպում գրեթե միևնույն ժամանակահատվածում։ Այս հանագամանքը խոչընդոտում է բակալավրի հենքի վրա կազմակերպվող մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունավետությանը, քանի որ նույն մասնագիտության բակալավրի ուսանողների որոշ կուրսեր միաժամանակ պրակտիկա են անցնում այլ հաստատություններում։
- Պրակտիկայի պաշտպանությունների համար տրամադրվող լսարաններում տեխնիկայի բացակայություն կամ թերի հագեցվածություն, որն ազդում է պրակտիկայի պաշտպանության գործընթացի լիարժեք իրականացմանը և սահմանված կարգով արհրաժեշտ բոլոր գործընթացների իրականացմանը՝ տեսասահիկների ցուցադրություն, պաշտպանության ընթացքի ձայնագրություն։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Ի. Բաբայան, Ա. Դալլաքյան, Ն. Մարտիրոսյան, Գ. Եգանյան

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Գ. Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն: 2. Հանձնարարել պրակտիկայի բոլոր մանկավարժներին և մեթոդիստներին ներկայացնել հաշվետվություն պրակտիկայի վերաբերյալ մինչև 16.01.2023թ.:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

04.01.2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 21-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ.դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ.դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ. դոցենտ Զարուհի Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ. դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ. դասախոս Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը:

Օրակարգ

1. Ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների կազմը վերահաստատելու մասին:
2. 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվելիք առարկաների ուսումնամեթոդական փաթեթները վերանայելու մասին:
3. 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդած առարկաների կատարման հաշվետվության մասին:
4. 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվելիք առարկաների միջանկյալ ստուգումների, քննությունների և ստուգարքների հարցաշարերի հաստատման մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների կազմը վերահաստատելու մասին:

Ա. Թոփուզյան - Ամբիոնում ստեղծված աշխատանքային հանձնաժողովների կազմում որոշակի փոփոխություններ են կատարվել: Առաջարկում եմ հաստատել հանձնաժողովների հետևյալ կազմերը:

Հ/հ	Հանձնաժողովի անվանումը	Անդամներ
1.	Որակի հանձնաժողով	նախագահ՝ **Նազարյան Լ.**, անդամ՝ **Հակոբյան Գ.**, **Պողոսյան Լ.**, **Մարկոսյան Ն.**
2.	Ուսանողների ճանաչողական, ուսումնահետազոտական պրակտիկայի կազմակերպման և շահառուների հետ կապի հանձնաժողով	նախագահ՝ **Հարությունյան Գ.** անդամներ՝ **Ասատրյան Մ.** **Եգանյան Գ.**
3.	Գիտա-հետազոտական աշխատանքի համակարգման հանձնաժողով	նախագահ՝ **Ասատրյան Լ.**, անդամ՝ **Թադևոսյան Հ.**, **Ջանիկյան Ս.**
4.	Միջազգային կապերի իրականացման հանձնաժողով	նախագահ՝ **Միսյան Ս.**, անդամ՝ **Գևորգյան Մ.**, **Թադևոսյան Մ.**
5.	Ուսումնական գործունեության և ուսումնամեթոդական աշխատանքների համակարգման հանձնաժողով	նախագահ՝ **Դալլաքյան Ա.**, **Մանուկյան Մարինե**, **Մանուկյան Արմենուհի**
6.	Դպրոցի հետ տարվող աշխատանքի կազմակերպման հանձնաժողով	նախագահ՝ **Մարտիրոսյան Ն.**, անդամ՝ **Աղուզումցյան Գ.**, **Բաբայան Ի.**
7.	ՊԴԱ-ի վերապատրաստման հարցերով զբաղվող հանձնաժողով	նախագահ՝**Հովհաննիսյան Ա.**, անդամ՝ **Ասատրյան Զ.**

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վերահաստատել ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների ներկայացված կազմը: 2. Հանձնարարել հանձնաժողովների նախագահներին ներկայացնել 2022թ. հանձնաժողովի հաշվետվությունը և 2023թ. աշխատանքային պլանը մինչև 15.02.2023թ.:

2. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվելիք առարկաների ուսումնամեթոդական փաթեթները վերանայելու մասին:

Ա. Թոփուզյան – Անհրաժեշտ է վերանայել 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվելիք առարկաների ուսումնամեթոդական փաթեթները՝ հատկապես ուշադրություն դարձնելով հետևյալ կետերին.

1. Առարկայի մասնագիտական վերջնարդյունքները:
2. Տվյալ ՄԿԾ-ի վերջնարդյունքներին և ՛՛Մանկավարժություն՛՛ որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերին այդ առարկայի վերջնարդյունքների համապատասխանությունը:
3. Փաթեթի թեմաների և առաջադրանքների համապատասխանությունը:
4. Գործնական աշխատանքի ձևերը և դրանց համապատասխանությունը գործնական աշխատանքի թեմաներին, առարկայի և մասնագիտության վերջնարդյունքներին:
5. Ինքնուրույն աշխատանքների առաջադրանքները և դրանց գնահատման ձևերը:

Փաթեթները վերանայելիս խնդրում ենք նաև ուշադրություն դարձնել գրականության ցանկին, որպեսզի այն ընդգրկի հնարավորինս ժամանակակից աղբյուրներ և գրականության ցանկում ներառված լինեն Ձեր հոդվածները ըստ համապատասխան թեմաների:

Ամբիոնում ստեղծվել է հանձնաժողով՝ ներքին աուդիտ, որը պետք է ուսումնասիրի բոլոր ուսումնամեթոդական փաթեթները և ներկայացնի դիտարկումներ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ: Առաջարկում եմ հաստատել հանձնաժողովի հետևյալ կազմը. նախագահ՝ Լ. Նազարյան, անդամներ՝ Գ. Հակոբյան, Լ. Պողոսյան, Ն. Մարկոսյան, Գ. Եգանյան, Գ. Հարությունյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վերանայված փաթեթները ուղարկել ամբիոն մինչև **08.02.2023թ.:**

2. Հաստատել ուսումնամեթոդական փաթեթները **ուսումնասիրող հանձնաժողովի ներկայացված կազմը:**

3. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդած առարկաների կատարման հաշվետվության մասին:

Ա. Թոփուզյան – Անհրաժեշտ է ներկայացնել հաշվետվություն 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդված առարկաների կատարման մասին: Մասնավորապես, նշել, թե տվյալ առարկայի շրջանակներում պլանավորած ամբողջ աշխատանքն է կատարվել, թե մասնակի, ինչպիսի դժվարություններ եք ունեցել, որոնք են եղել ուժեղ և թույլ կողմերը, միջանկյալ ստուգումները և քննությունները որքանով են ընդգրկել առարկայի թեմատիկ բովանդակությունը և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվետվությունները ներկայացնել ամբիոն մինչև 06.02.2023թ.:

4. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվելիք առարկաների միջանկյալ ստուգումների, քննությունների և ստուգարքի հարցաշարերի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Առաջարկում եմ հաստատել 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգումների, քննությունների և ստուգարքի հարցաշարերը, որոնք կազմված են ըստ համապատասխան ուսումնական պլանի, առարկայական նկարագրի, սահմանված ձևաչափի և գնահատման բաղադրիչների:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգումների, քննությունների և ստուգարքի հարցաշարերը և տեղադրել Classroom հարթակի համապատասխան էջերում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

30.01.2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 20-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ.դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ. դոցենտ Զարուհի Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ. դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ. դասախոս Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ. դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը:

Օրակարգ

1. 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդված առարկաների հաշվետվությունների մասին: /կցվում են/
2. Ամբիոնի որակի հանձնաժողովի և ներքին աուդիտի հաշվետվությունը 2-րդ կիսամյակում կարդացվող առարկաների վերանայված ուսումնամեթոդական փաթեթների մասին:
3. 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդված առարկաների հաշվետվությունների մասին: /Հաշվետվությունները կցվում են/

ՈՐՈՇԵՑԻՆ – Խստորեն պահպանել տվյալ առարկաների դասաբաշխման պահանջները, գործնական աշխատանքները բխեցնել դասախոսությունների

ամրապնդման և առարկայի ու ՄԿԾ-ի վերջնարդյունքներից, դասընթացի վերջում վերլուծել արդյունքները և առանձնացնել այն վերջնարդյունքները, որոնք ձևավորել է այդ առարկան՝ նշելով այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է անել հետագայում՝ առարկայի ազդեցությունը ուժեղացնելու նպատակով:

2. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի որակի հանձնաժողովի և ներքին աուդիտի հաշվետվությունը 2-րդ կիսամյակում կարդացվող առարկաների վերանայված ուսումնամեթոդական փաթեթների մասին:

Լ. Նազարյան – Որակի հանձնաժողովը և ներքին աուդիտի աշխատանքներին մասնակցած հանձնաժողովը՝ թվով 6 հոգի 2 շաբաթ ուսումնասիրել են 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթները: Ես ուսումնասիրել եմ 8 ուսումնամեթոդական փաթեթ՝ «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն», «Մանկավարժական դիագնոստիկա», «Տարրական կրթության մանկավարժություն», «Սոցիալական մարդաբանություն», «Մանկավարժական մարդաբանություն», «Մանկավարժական վալեոլոգիա», «Մանկավարժական կանխատեսում և նախագծում», «Մանկավարժական արժեբանություն»: Ընդհանրական դիտողությունները հիմնականում վերաբերվում են գործնական աշխատանքի ձևերի և թեմայի փոխկապակցվածությանը, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքներին: Առկա է անհամապատասխանություն նկարագրում նշված դասախոսության ժամաքանակի և թեմատիկ տրոհման մեջ ներկայացված թեմաների քանակի մեջ, օրինակ՝ ՛՛Մանկավարժական վալեոլոգիա՛՛ առարկայի փաթեթում /հեղինակ՝ Լ. Պողոսյան/: Ինքնուրույն աշխատանքները գրեթե բոլոր փաթեթներում դրված են թեմատիկ տրոհման ուսումնառության առաջադրանքներ բաժնում, առաջարկում եմ կամ բաժինը վերանվանել ուսումնառության և ինքնուրույն աշխատանքի առաջադրանքներ և դրանք թողնել այդտեղ, կամ ինքնուրույն աշխատանքների թեմաները ներկայացնել թեմատիկ տրոհման վերջում: Կան փաթեթներ, որտեղ գործնական աշխատանքի մեթոդները և թեմաները չափազանց շատ են մեկ դասաժամի համար, օրինակ՝ ՛՛Տարրական կրթության մանկավարժություն՛՛ առարկայի փաթեթում /հեղինակ՝ Զ. Ասատրյան/ մեկ

գործնական աշխատանքի համար առանձնացված է 6 մեթոդ, որը կարծում եմ իրատեսական չէ և անհրաժեշտ է կրճատել:

Քանի որ Լ. Պողոսյանը այս պահին արձակուրդում է, ես կներկայացնեմ իր կատարած դիտարկումները ևս: Տիկին Պողոսյանն ուսումնասիրել է «Սոցիալ-մանկավարժական խորհրդատվության կազմակերպում», «Համեմատական մանկավարժություն», «Սոցիալ-մանկավարժական աշխատանքն ընտանիքի հետ», «Սոցիալ-մանկավարժական կառավարում» առարկաների ուսումնամեթոդական փաթեթները: Հիմնական դիտարկումներն են.

- Վերանայել առարկայական վերջնարդյունքները և ներկայացնել տառային նիշերով /Ա1, Բ2, Գ3 և այլն/:
- Թեմատիկ տրոհման մեջ մեթոդների և աշխատանքի բովանդակության համապատասխանեցման կարիք կա:
- Առաջադրանքներում ավելի շատ պետք է լինեն կարողություններին և հմտություններին միտված առաջադրանքներ /ոչ թե մեկնաբանման և հասկացման/: /Ն. Մարտիրոսյան՝ «Սոցիալ-մանկավարժական կառավարում»/

Լ. Պողոսյանը նախապես խոսել է բոլոր դասախոսների հետ և ներկայացրել իր դիտարկումները:

Գ. Եգանյան – Ուսումնասիրել եմ 9 ուսումնամեթոդական փաթեթ՝ «Գործնական մանկավարժություն» ՄՖԻ և ԿՀՍ ֆակուլտետներում, «Մանկավարժություն» ՄՖԻ, ՕԼ, ԿՔԱ, ԲՍ ֆակուլտետներում, «Սոցիալ-մանկավարժական պրակտիկում», «Մանկավարժական պրակտիկում», «Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ», «Սոցիալական մանկավարժություն»: Ներկայացնեմ այն հիմնական դիտարկումները, որոնք գրեթե բոլոր փաթեթներում առկա էին. /ամբողջական հաշվետվությունը կցվում է/

- Դասընթացի նկարագրում նպատակը ըստ ՈԱՇ-ի ներկայացված պահանջի չի ներկայացվել, միայն մի քանի կետով ձևակերպված պետք է լինեն:
- Նկարագրից պետք է հանել խնդիրները:

- Կրթական ելքային արդյունքները ևս վերանայման կարիք ունեն. պետք է ձևակերպել հետևյալ կերպ **Մասնագիտական գիտելիք և իմացություն ա1, ա2, ա3, Գործնական մասնագիտական կարողություններ՝ բ1, բ2, բ3, և Ընդհանրական/ փոխանցելի կարողություններ՝ գ1, գ2, գ3**
- Յուրաքանչյուր վերջնարդյունք ըստ ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի պահանջների պետք է ներկայացվեն. սահմանել, ներկայացնել, կիրառել, տարբերակել, գնահատել, որոշել և այլ բայերով:
- Նկարագրում գնահատման բաղադրիչներ և կշիռ բաժնում ներկայացնել գնահատման բաղադրիչները իրենց բովանդակությամբ, գնահատվող հանձնարարությունները և բոլոր բաղադրիչների գնահատման հստակ չափանիշները:
- Թեմատիկ տրոհման մեջ անհրաժեշտ է նշել կոնկրետ գործնական աշխատանքի մեթոդը և դրա հստակ գնահատման չափանիշները:
- Առաջադրանքներում անհրաժեշտ է արտացոլել մասնագիտացման առանձնահատկությունը:
- Ինքնուրույն աշխատանքին հատկացվող ժամաքանակը նշել նկարագրում, դրան համապատասխան ներկայացնել ինքնուրույն աշխատանքի թեմաները:
- Գրականության ցանկը համալրել ժամանակակից աղբյուրներով և սեփական հոդվածներով և ուսումնամեթոդական նյութերով:

Գ. Հարությունյան – Ուսումնասիրել եմ 10 ուսումնամեթոդական փաթեթ՝ «Մանկավարժական հաղորդակցում», «Սոցիալ-մանկավարժական դիագնոստիկա», «Էթնոմանկավարժություն», «Մանկավարժություն» ՄՖԻ, ՕԼ, ԿՔԱ, ՊՀ ֆակուլտետներում, «Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում», «Սոցիալական մանկավարժություն», «Ես և շրջակա աշխարհը», որոնց վերաբերյալ ընդհանուր դիտարկումներն են. /ամբողջական հաշվետվությունը կցվում է/

- Դասընթացի առարկայական նկարագրում արտացոլված են միջանկյալ ստուգման ձևերը, սակայն բացակայում են դրանց գնահատման չափանիշները: /Լ. Ասատրյան՝ «Ես և շրջակա աշխարհը»/
- Թեմատիկ տրոհման մեջ Գնահատում բաժնում ներկայացված չեն կիրառվող մեթոդների գնահատման չափանիշները: /Լ. Ասատրյան՝ «Ես և շրջակա աշխարհը», Մ. Ասատրյան՝ «Մանկավարժություն», Մ. Գևորգյան՝ «Մանկավարժություն»/
- Ինքնուրույն աշխատանքները արտացոլված են թեմատիկ տրոհման մեջ, սակայն ներկայացված չեն դրանց գնահատման չափանիշները: / Մ. Գևորգյան՝ «Մանկավարժություն», Ն. Մարկոսյան՝ «Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում», Ս. Ջանիկյան՝ «Մանկավարժություն», Գ. Հակոբյան՝ «Էթնոմանկավարժություն»/
- Կան դասընթացներ /օրինակ ՛՛Մանկավարժություն՛՛ առարկան/, որոնք դասավանդվում են տարբեր ֆակուլտետներում, սակայն առարկայական նկարագրում և թեմատիկ տրոհման մեջ չկա տարբերակում՝ ելնելով ֆակուլտետների և համապատասխան մասնագիտությունների առանձնահատկություններից /այն արտահայտված պետք է լինի նպատակի և կրթական ելքային վերջնարդյունքների ձևակերպման, գործնական աշխատանքների, ինչպես նաև թեմատիկ տրոհման մեջ ներկայացված առաջադրանքների և ինքնուրույն աշխատանքների մեջ/: /Մ. Ասատրյան՝ «Մանկավարժություն»/

Ն. Մարկոսյան – Ուսումնասիրել եմ 6 ուսումնամեթոդական փաթեթ՝ «Մանկավարժություն» ՀԿ, ՊՀ, ՄՖԻ, ԿՔԱ, ՕԼ, Կուլտուրայի ֆակուլտետներում, «Մանկավարժության պատմություն», «Սոցիալական մանկավարժության պատմություն», «Արտադասարանական դաստիարակչական տեխնոլոգիաներ», որոնց վերաբերյալ ունեմ որոշ դիտարկումներ. /ամբողջական հաշվետվությունը կցվում է/

- Կան դասընթացներ, որոնց առարկայական նկարագրից և թեմատիկ տրոհումից չի երևում, որ դասընթացը դասավանդվում է միաժամանակ 4 ֆակուլտետներում /օրինակ՝ ՀԿ, ՊՀ, ՄՖԻ, ԿՔԱ/: Կարծում ենք, որ նկարագրի նպատակի ձևակերպման, կրթական ելքային վերջնարդյունքների, թեմատիկ տրոհման առաջադրանքների, գործնական աշխատանքների և ինքնուրույն աշխատանքների մեջ պետք է դրանք արտացոլված լինեն: /Մ. Ասատրյան՝ «Մանկավարժություն»/
- Կան դասընթացներ, որոնց առարկայական նկարագրի մեջ արտացոլված չեն միջանկյալ ստուգման ձևերը, գնահատվող հանձնարարություններն ու դրանց գնահատման չափանիշները: /Մ. Գևորգյան՝ «Մանկավարժություն»/
- Թեմատիկ տրոհման «Գնահատում» բաժնում նշված չեն տվյալ գործնական աշխատանքի գնահատման չափանիշները: /Մ. Ասատրյան՝ «Մանկավարժություն», Ն. Մարտիրոսյան՝ «Արտադասարանական դաստիարակչական տեխնոլոգիաներ»/
- Ինքնուրույն աշխատանքները արտացոլված են թեմատիկ տրոհման մեջ, սակայն դրանց գնահատման չափանիշները բացակայում են: /Մ. Գևորգյան՝ «Մանկավարժություն», Գ. Հակոբյան՝ «Մանկավարժության պատմություն»/

Գ. Հակոբյան - Ուսումնասիրել եմ 6 ուսումնամեթոդական փաթեթ՝ «Սոցիալական մանկավարժություն», «Մանկավարժություն», «Մանկավարժության պատմություն», «Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն», «Մեդիակրթություն»: Ունեմ մի քանի առաջարկություն. /ամբողջական հաշվետվությունը կցվում է/

- դասընթացի բովանդակությունը կարելի է համառոտ նկարագրել, այլ ոչ թե դասընթացի բոլոր թեմաները ներկայացնել, /Գ. Եգանյան՝ «Սոցիալական մանկավարժություն»/
- ելքային արդյունքները ձևակերպել տառային նիշերով/Ա1, Բ1, Գ1 և այլն/, /Լ. Ասատրյան՝ «Մանկավարժություն», Ա. Հովհաննիսյան՝ «Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն»/

- հիմնական գրականության ցանկը շատ ծավալուն է, կրճատել, /Գ. Աղուզումցյան՝ «Մանկավարժություն», Ա. Մանուկյան՝ «Մեդիակրթություն»/
- թեմատիկ տրոհման շրջանակներում ներառել ինքնուրույն աշխատանքի թեմաները: /Ա. Հովհաննիսյան՝ «Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն», Ա. Մանուկյան՝ «Մեդիակրթություն»/

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնաժողովի անդամների հաշվետվություններն ընդունել ի գիտություն և կատարել բոլոր շտկումները: Ներքին աուդիտի աշխատանքները շարունակել և հանձնարարել հանձնաժողովին անդրադառնալ և նորից ստուգել փաթեթները, տեսնել որքանով են դիտողությունները ուղղված: Միաժամանակ հաշվի առնել այն հանգամանքը, որ մինչև ապրիլի 1-ը պատրաստ են լինելու ՄԿԾ-ը, անհրաժեշտ է ճշտել որքանով են առարկայական ծրագրերը և դրանց վերջնարդյունքները համապատասխանում տվյալ մասնագիտության ՄԿԾ վերջնարդյունքներին: Այս հարցի մասին հաշվետվությանը անդրադառնալ ապրիլի 1-ին տասնօրյակին:

3. ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Այս կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասախոս պետք է մասնակցի 2 դասալսման: Պատրաստ է արդեն Ձեր առաջարկությունների հիման վրա արված դասալսումների գրաֆիկը: Խնդրում եմ վերջնական տարբերակը նորից նայել: Ի՞նչ դիտարկումներ կան: Չկա՞ն այլ առաջարկություններ: Լավ: Հաստատում ենք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը և խստորեն հետևել գրաֆիկի կատարմանը: /Գրաֆիկը կցվում է/

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

22.02.2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 21-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ.դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ. դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ. դոցենտ Զարուհի Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ. դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյանը, մ.գ.թ. դոցենտ Գ. Եգանյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ. դասախոս Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը:

Բացակայում էին. մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը:

Օրակարգ

1. 2023թ. մանկավարժական համահամալսարանական օլիմպիադայի կանոնադրության հաստատման մասին:
2. Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի կազմակերպման մասին:
3. Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման և կարիքների վերհանման մասին:
4. «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության հարցաշարը հաստատելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - 2023թ. մանկավարժական համահամալսարանական օլիմպիադայի կանոնադրության հաստատման մասին:

Ն. Մարտիրոսյան – Այս տարի մանկավարժական համահամալսարանական օլիմպիադան կանցկացվի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում: Օլիմպիադայի հայտերի ընդունման ժամկետը սահմանված է ս/թ մարտի 17-27-ը: Օլիմպիադան անցկացվելու է 3 փուլով: 1-ին փուլը տեղի կունենա ս/թ ապրիլի 20-ին, 2-րդ փուլը՝ ս/թ մայիսի 12-ին, իսկ ամփոփիչ 3-րդ փուլը՝ հունիսի 1-ին՝ քարոզների մրցույթի հետ միասին: Օլիմպիադայի կանոնադրության մեջ հստակ ներկայացված են յուրաքանչյուր փուլի համար նախատեսված առաջադրանքները և գնահատման չափանիշները: Օլիմպիադայի ավարտին մասնակիցները կստանան մասնակցության մասին հավաստագրեր, իսկ հաղթողները (առաջին, երկրորդ, երրորդ տեղեր)՝ նվերներ և դիպլոմներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյան, Գ. Աղուզումցյան, Ի. Բաբայան

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել 2023թ. մանկավարժական համահամալսարանական օլիմպիադայի կանոնադրությունը: /կցվում է/ 2. Հանձնարարել բոլոր դասախոսներին տարածել օլիմպիադայի մասին տեղեկատվությունը համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

2. ԼՍԵՑԻՆ - Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի կազմակերպման մասին:

Ա. Թոփուզյան – Ս/թ մայիսի 15-ին նախատեսում ենք անցկացնել ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովը, որին մասնակցելու են ՍԿ և ԿՀՍ ֆակուլտետների մանկավարժությունից թեզ և ավարտական աշխատանք գրող մագիստրոսներն ու բակալավրերը, որոնք կներկայացնեն իրենց հետազոտական աշխատանքների արդյունքները: Գիտաժողովի ելույթները համատեղ հոդվածների տեսքով կհրապարակվեն: Այս տարի դասախոսները ևս պետք է ելույթ ունենան իրենց ուսանողների հետ: Գիտաժողովին կարող են մասնակցել նաև ս/թ հունվարին ավարտած հեռակա մագիստրոսները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Ա. Դալլաքյան

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Գիտաժողովի կազմակերպման պատասխանատու նշանակել Ա. Դալլաքյանին: 2. Հանձնարարել Ա. Դալլաքյանին կազմել գիտաժողովի ծրագիրը մինչև 17.04.2023թ.:

3. ԼՍԵՑԻՆ - Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման և կարիքների վերհանման մասին:

Լ. Նազարյան – Մշակել ենք հարցաշարեր ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման և կարիքների բացահայտման համար: Նախնական որոշվել է ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումն իրականացնել «Բանասիրական», «Օտար լեզուների» և «Կուլտուրայի» ֆակուլտետներում: Ուսանողների կարիքների բացահայտման նպատակն է պարզել ի՞նչ լրացուցիչ դասընթաց կուզենան ուսանողներն անցնել որպես այլընտրանքային դասընթաց, ի՞նչ միջոցառումներ կցանկանան իրականացնել դասախոսների հետ միասին, ի՞նչ ակնկալիքներ ունեն դասախոսներից, ուսումնառության կազմակերպման ինչպիսի՞ արդի նորարարություններ կցանկանան ներմուծել կրթական գործընթաց և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման պատասխանատու նշանակել Լ. Նազարյանին, իրականացնողներ՝ Ա. Հովհաննիսյան, Մ. Գևորգյան, Զ. Ասատրյան, Լ. Նազարյան: 2. Ուսանողների կարիքների բացահայտման իրականացնողներ նշանակել Լ. Նազարյանին, Լ. Պողոսյանին, Ն. Մարկոսյանին:

4. ԼՍԵՑԻՆ - «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության հարցաշարը հաստատելու մասին:

Ա. Թոփուզյան – Ասպիրանտուրայի բաժինը խնդրել է ներկայացնել «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության հարցաշարը՝ գարնանային քննաշրջանը կազմակերպելու համար: Հարցաշարը վերանայվել է և համապատասխանեցվել այս տարվա համանուն առարկայի ծրագրին: Խնդրում եմ ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն հարցաշարը հաստատելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Պողոսյան, Հ. Թադևոսյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել «Կրթական նոր տեխնոլոգիաներ» որակավորման քննության ներկայացված հարցաշարը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

15.03.2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 17-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտներ՝ Գ. Աղուզումցյանը, Ա. Հովհաննիսյանը, Ի. Բաբայանը, Ս. Սիսյանը, Ն. Մարտիրոսյանը, Զ. Ասատրյանը, Լ. Նազարյանը, Գ. Հարությունյանը, Մ. Ասատրյանը, Մ. Գևորգյանը, Ա. Դալլաքյանը, Գ. Եգանյանը, Ս. Ջանիկյանը, Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը:

Հարգելի պատճառով բացակայում էին՝ մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Հ. Թադևոսյանը, Լ. Պողոսյանը, Ա. Մանուկյանը, Գ. Հակոբյանը, մ.գ.թ., դասախոս Միշա Թադևոսյանը:

Օրակարգ

1. Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի կազմակերպման ընթացքի մասին:
2. «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծերի համահամալսարանական մրցույթի հետ կապված աշխատանքների մասին /զեկ. Լ. Նազարյան/:
3. «Մակավարժություն» առարկայից բակալավրների և մագիստրսների շրջանում իրականացվող օլիմպիադայի 1-ին փուլի արդյունքների մասին /զեկ. Ն. Մարտիրոսյան/:
4. Սեմինար «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով: /զեկ. Ա. Գաստյան/

1. ԼՍԵՑԻՆ - Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի կազմակերպման ընթացքի մասին:

Ա. Թոփուզյան- Հարգելի գործընկերներ, սույն թվականի մայիսի 11-ին, ժամը 11:00-ին, 3-րդ հարկի Կարմիր դահլիճում տեղի է ունենալու դասախոս-ուսանող գիտապրակտիկ կոնֆերանսը, որտեղ մեր բակալավրիատի ավարտական կուրսի և մագիստրոս 2-րդ կուրսի ուսանողները հանդես կգան և կներկայացնեն իրենց հետազոտությունների արդյունքները: Խնդրում ենք պատրաստ լինել ուսանողների հետ համատեղ ներկայացնել ավարտական աշխատաքների և թեզերի հետազոտական

մասը: Գիտաժողովի ելույթները հոդվածների տեսքով կհրապարակվեն: Սա հնարավորություն կտա ուսանողին իր աշխատանքի ղեկավարի հետ համատեղ հոդված ունենալ և թեզի կամ ավարտական աշխատանքի հետազոտական մասը պաշտպանությունից առաջ հրապարակայնորեն ներկայացնել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Ա. Դալլաքյան, Ի. Բաբայան:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հանձնարարել մագիստրոսների և ավարտական աշխատանք գրող բակալավրների ղեկավարներին մեկ անգամ ևս ստուգել կոնֆերանսին ուսանողների պատրաստվածության մակարդակը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել լրացուցիչ խորհրդատվություն և միասին պատրաստել կոնֆերանսի ելույթները՝ համատեղ հանդես գալու համար:

2. ԼՍԵՑԻՆ - «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծերի համահամալսարանական մրցույթի հետ կապված աշխատանքների մասին /զեկ. Լ. Նազարյան/:

Լ. Նազարյան - Ինչպես գիտեք, ավարտին է մոտենում «Ուսյալ ազգի վկայագրերը» թեմայով նախագծերի մրցույթը: Շնորհակալություն ենք հայտնում բոլորին մրցույթին ակտիվորեն մասնակցելու համար, և քանի որ աշխատանքները ամփոփման փուլում են անհրաժեշտ է ներկայացնել նախագծի ուղղությամբ կատարված հոդվածները /մինչև 7 էջ/, որոնք տպագրվելու են Հայոց ցեղասպանության թանգարանի հանդեսում, և նախագծի ուղղությամբ կատարված ողջ աշխատանքը՝ փաթեթավորված տեսքով ինստիտուտին հանձնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս. Սիսյան, Ա. Հովհաննիսյան, Լ.Ասատրյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մինչև մայիսի 17-ը նրկայացնել 1. մրցույթի մասնակիցների տվյալները /անուն, ազգանուն, ֆակ., կուրս/ ըստ նախագծերի, 2. ամբողջական նախագծերի փաթեթները և հոդվածները:

3. ԼՍԵՑԻՆ - «Մակավարժություն» առարկայից բակալավրների և մագիստրսների շրջանում իրականացվող օլիմպիադայի 1-ին փուլի արդյունքների մասին /զեկ. Ն. Մարտիրոսյան/:

Ն. Մարտիրոսյան- ս./թ.-ի ապրիլի 27-ին անցկացվեց բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններում «Մանկավարժություն» առարկայից իրականացվող օլիմպիադայի 1-ին փուլը: Այս փուլում բակալավրիատի մասնակիցներին տրվում է 20 հարցից բաղկացած թեստ, որը ուսանողները պետք է լրացնեին օնլայն: Հաջորդ փուլ անցնում էին այն ուսանողները, ովքեր հավաքել էին 80 և ավել միավոր: Իսկ

մագիստրատուրայի ուսանողները պետք է ներկայացնեին հետազոտական աշխատանք՝ մանկության հիմնախնդիրների համատեքստում: Առաջին փուլի արդյունքներն արդեն ամփոփվել են և ներկայացվել մասնակիցներին: 2-րդ փուլ է անցել 45 ուսանող բակալավրիատից և 8 մագիստրոս: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն դասախոսներին, ովքեր մասնակցել են օլիմպիադայի կազմակերպման ընթացիկ աշխատանքներին և ուսանողների գնահատման գործընթացին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Ի. Բաբայան, Ս. Ջանիկյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ն. Մարտիրոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և պատրաստվել օլիմպիադայի 2-րդ փուլին:

4. **ԼՍԵՑԻՆ** – Ամբիոնի հայցորդ՝ Աննա Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով սեմինարի ներկայացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Թոփուզյան, Գ. Եգանյան, Ա. Դալլաքյան, Ա. Հովհաննիսյան, Ն. Մարկոսյան, Լ. Նազարյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սեմինարի ժամանակ հնչած առաջարկություններն ու դիտողությունները տրամադրել հեղինակին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

03.05.2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 18-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտներ՝ Գ. Աղուզումցյանը, Լ. Պողոսյանը, Ա. Հովհաննիսյանը, Ի. Բաբայանը, Ս. Սիսյանը, Գ. Եգանյանը, Ն. Մարտիրոսյանը, Զ. Ասատրյանը, Լ. Նազարյանը, Գ. Հարությունյանը, Մ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը, Մ. Գևորգյանը, Ա. Դալլաքյանը, Ս. Ջանիկյանը, Ն. Մարկոսյանը:

Հարգելի պատճառով բացակայում էին՝ մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Հ. Թադևոսյանը, Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դասախոսներ՝ Մ. Թադևոսյանը, Մարինե Մանուկյանը:

Օրակարգ

1. «Մակավարժություն» առարկայից իրականացվող օլիմպիադայի արդյունքների մասին: /զեկ. Ն. Մարտիրոսյան/
2. Դասավանդվող առարկաների փաթեթները վերանայելու և հանձնելու մասին:
3. Պրակտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ցուցահանդեսի կազմակերպման մասին: /զեկ. Գ. Հարությունյան/
4. Ասպիրանտուրայում ‹‹Մանկավարժություն›› առարկայի որակավորման քննության հարցաշարի հաստատման մասին:
5. «Մանկավարժություն» առարկայի ասպիրանտուրայի ընդունելության քննության հարցաշարի հաստատման մասին:
6. Մանկավարժության ամբիոնի հայցորդ՝ Վանիկ Վաղինակի Մելքոնյանի ատենախոսության թեմայի հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - «Մակավարժություն» առարկայից իրականացվող օլիմպիադայի արդյունքների մասին: /զեկ. Ն. Մարտիրոսյան/

Ն. Մարտիրոսյան- Ինչպես որ մեր ամբիոնի կողմից հաստատվել էր օլիմպիադայի անցկացման կարգը, դրան համաատասխան էլ անցկացրել ենք օլիմպիադան: Այն կազմակերպվել է երկու փուլով՝ բակալավրիատի և մագիստրոսների համար: Կանխավ շնորհակալություն եմ հայտնում իմ բոլոր այն գործընկերներին, ովքեր աջակցեցին և աջակցելու են վերջին փուլի հետ կապված աշխատանքներում: Առաջին փուլի համար բակալավրիատում հայտագրվել էին 56 ուսանող, սակայն օնլայն հարցմանը մասնակցեցին միայն 54 ուսանող, որից 45 ուսանող անցան 2-րդ փուլ: Երրորդ փուլ են անցել 18 ուսանող: Մագիստրատուրայում, ցավոք, մասնակցությունը քիչ էր, թվով 8 մագիստրոս մասնակցեցին առաջին փուլին, որից 7 ուսանող անցան հաջորդ փուլ, իսկ երրորդ փուլ անցան 6 ուսանող: Օլիմպիադայի վերջին փուլը ավարտվելու է մեր ավանդական քարոզների մրցույթով, երեխաների իրավունքների պաշտպանության օրը: Բակալավրների քարոզը ուղղված է լինելու ավագ դպրոցականներին, իսկ մագիստրոսներինը՝ երիտասարդ ուսուցիչներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Ներկայացնել ամբիոն բոլոր երրորդ փուլ անցած մասնակից ուսանողների տվյալները, 2. Դասախոսներին հանձնարարել օգնել ուսանողներին՝ քարոզներին պատրաստվելու, քարոզի բովանդակությունը պահանջներին համապատասխանեցնելու և հռետորական կարողությունները մշակելու գործում:

2. ԼՍԵՑԻՆ - Դասավանդվող առարկաների փաթեթները վերանայելու և հանձնելու մասին:

Ա. Թոփուզյան – Ես խնդրել էի, որ մինչև ս./թ.-ի մայիսի 10-ը ուղարկեիք դասավանդվող առարկայական ծրագրերի վերանայված փաթեթները: Ցավոք, ոչ բոլոր դասախոսներն են ներկայացրել իրենց փաթեթները:

ՈՐՈՇԵՑԻՆ – ս./թ.-ի մայիսի 29-ին ամբիոն ներկայացնել դասավանդվող առարկայական փաթեթները՝ էլեկտրոնային և տպված տարբերակով:

3. ԼՍԵՑԻՆ - Պրակտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ցուցահանդեսի կազմակերպման մասին: /զեկ. Գ. Հարությունյան/

Գ. Հարությունյան – Արդեն ավանդույթ դարձած պրակտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ցուցահանդեսն այս տարի անցկացնելու ենք հունիսի 9-ին: Ցուցահանդեսում իրենց աշխատանքներն են ներկայացնելու մեր համալսարանի 10 ֆակուլտետների տարբեր մասնագիտությունների առկա բակալավր 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները՝ իրենց մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության ձևով: Խնդրում եմ պրակտիկաներում ներգրավված բոլոր մեթոդիստներին և մանկավարժներին աշխատել ուսանողների հետ և պատրաստվել ցուցահանդեսին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյանը, Գ. Եգանյանը, Ի. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Գ. Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն, 2. Հանձնարարել մանկավարժական պրակտիկայում ընդգրկված բոլոր մեթոդիստներին և մանկավարժներին ուսանողների հետ միասին պատրաստվել ցուցահանդեսին:

4. ԼՍԵՑԻՆ - Ասպիրանտուրայում ‹‹Մանկավարժություն›› առարկայի որակավորման քննության հարցաշարի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Վերանայվել և արդիականացվել է ասպիրանտուրայում ‹‹Մանկավարժություն›› առարկայի որակավորման քննության հարցաշարը: Այն բաղկացած է 92 հարցից և համապատասխան գրականության ցանկից: Հարցաշարն ընդգրկում է առարկայի ամբողջ բովանդակությունը: Առաջարկում եմ հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Ասատրյան, Լ, Պողոսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ասպիրանտուրայում ‹‹Մանկավարժություն›› առարկայի որակավորման քննության հարցաշարը և ներկայացնել ասպիրանտուրայի բաժին:

5. ԼՍԵՑԻՆ - «Մանկավարժություն» առարկայի ասպիրանտուրայի ընդունելության քննության հարցաշարի հաստատման մասին:

Ա. Թոփուզյան – Վերանայվել և արդիականացվել է ‹‹Մանկավարժություն›› առարկայի ասպիրանտուրայի ընդունելության քննության հարցաշարը: Այն բաղկացած է 92 հարցից և համապատասխան գրականության ցանկից: Առաջարկում եմ հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս. Սիսյան, Լ. Ասատրյան, Ա. Հովհաննիսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ‹‹Մանկավարժություն›› առարկայի ասպիրանտուրայի ընդունելության քննության հարցաշարը և ներկայացնել ասպիրանտուրայի բաժին՝ կայքում տեղադրելու համար:

6. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդ Վանիկ Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը, Լ. Նազարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Վանիկ Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպայական կազմի ռազմական կրթության արդիականացման ուղիները»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Ասատրյանին:

Ամբիոնի նիստի 23 անդամներից ներկա էին 18-ը, որից կողմ քվեարկեց 18-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

24.05.2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 17-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտներ՝ Գ. Աղուզումցյանը, Լ. Պողոսյանը, Ա. Հովհաննիսյանը, Ի. Բաբայանը, Ս. Սիսյանը, Զ. Ասատրյանը, Լ. Նազարյանը, Գ. Հարությունյանը, Մ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը, Մ. Գևորգյանը, Ա. Դալլաքյանը, Գ. Եգանյանը, Ս. Ջանիկյանը, Ն. Մարկոսյանը:

Հարգելի պատճառով բացակայում էին՝ մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Հ. Թադևոսյանը, Ա. Մանուկյանը, Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դասախոսներ՝ Մ. Թադևոսյանը, Մ. Մանուկյանը:

Օրակարգ.

1. «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծերի համահամալսարանական մրցույթի ամփոփման մասին: /զեկ. Լ. Նազարյան/
2. Պրակտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ցուցահանդեսի ամփոփման մասին:
3. Սեմինար «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն դպրոցի կառավարման գործընթացում» թեմայով: /Լ. Անտոնյան/
4. Սեմինար «Տարբերակված ուսուցման հիմնախնդիրը տարրական դպրոցում» թեմայով: /Ա. Հովսեփյան/

1. ԼՍԵՑԻՆ - «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծերի համահամալսարանական մրցույթի ամփոփման մասին: /զեկ. Լ. Նազարյան/

Ա. Թոփուզյան- Հարգելի գործընկերներ, ավարտում ենք «Ուսյալ ազգի վկայագրերը» թեմայով ուսանող-դասախոս համատեղ նախագծի մրցույթը, շնորհակալ եմ, որ բոլորդ ակտիվ աշխատեցիք և մասնակցեցիք մրցույթին: Ամփոփիչ միջոցառումը տեղի է ունենալու ս./թ.-ի հունիսի 16-ին, Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանում: Ժամանակի սղության պատճառով ամփոփիչ միջոցառմանը բոլորը հնարավություն չեն ունենալու ելույթ ունենալ, այդ կապակցությամբ ձայնը փոխանցում եմ մրցույթի համակարգող Լ. Նազարյանին:

Լ. Նազարյան - Ժյուրիի անդամների որոշմամբ առաջին երեք տեղերի համար պայքարում են Պատմաբանների խումբը՝ ղեկավարներ Ս. Ջանիկյան և Ա. Եփրիկյան, Բանասերների խումբը՝ ղեկավարներ Գ. Հակոբյան և Ք. Աբրահամյան և Սկզբնական կրթության ֆակ.-ի խումբը՝ ղեկավարներ Ս. Սիսյան և Ի. Բաբայան: Այս երեք խմբերն են առաջին երեք տեղերի համար պայքարում: Խնդրում եմ այս երեք խմբերին հավաքել և կրկին փորձ անել, որպեսզի այնտեղ ըստ էության ելույթ ունենան: Ունենք նաև անվանակարգեր. ժյուրին այնպես է բաշխել դրանք, որ բոլոր մասնակից նախագծերի հեղինակները պարգևատրվելու են: Մեր մրցույթում պարտվողներ չկան:

Հավաստագրերի և պարգևների ձեռք բերման ուղղությամբ աշխատանքները կատարված են: Մեզ մնում է հավաստագրերը տալ ստորագրելու: Այսօր բաժանել ենք հրավիրատոմսերը: Մյուս կարևոր հարցը դասերի հարցն է. ովքեր այդ օրը դաս ունեն թող մոտենան դեկաններին՝ ժամերի առումով տեղափոխություններ անելու համար: Այդ օրը մենք նաև մեզ հետ տանելու ենք հոդվածները և նախագծերի ողջ փաթեթները և հանձնելու ենք թանգարանին: Պետք է խնդրեմ տիկին Լ. Ասատրյանին այդ օրը ելույթ ունենալ՝ որպես մեր ամբիոնի դոկտոր պրոֆեսոր: Եվս մեկ անգամ կրկնում եմ. խմբերը իրենց դասախոսների հետ պատրաստվեն ելույթ ունենալ՝ 10 րոպե ժամանակահատվածում:

Ա. Թոփուզյան – Հակիրճ ամփոփելով մրցույթի ուղղությամբ կատարված աշխատանքը պետք է արձանագրեմ որ մրցույթին մասնակցեցին ճիշտ 100 ուսանող և 27 դասախոս ՀՊՄՀ բոլոր ֆակուլտետներից բացի գեղարվեստի և Կուլտուրայի ֆակուլտետներից: Ուզում եմ հատուկ շեշտել, որ առաջին իսկ պահից, երբ ստեղծվեցին խմբերը, և՛ ուսանողները, և՛ դասախոսները մեծագույն պատասխանատվությամբ վերաբերվեցին նախագծերի իրականացմանը, յուրաքանչյուրը իր հոգու մասնիկը դրեց այս նախագծում: Նախագիծը սովորեցրեց ուսանողներին և դասախոսներին ճիշտ նպատակներ դնել, կանխատեսել, համագործակցել: Նախագծի իրականացումը շատերի համար դարձավ հայենասիրրության, ազգային ինքնագիտակցության ու ինքնության ամրապնդման միջոց: Բոլոր մասնակիցները հնարավորություն ունեցան հաղորդակցվելու մեր ժողովրդի պատմությանը, օտար ափերում ապրող մեր նախնիների կրթական ավանդույթներին, անվանի մանկավարժների գործունեությանը, մեր ժողովրդի ուսյալ զավաների կրթա մանկավարժական, ազգապահպան, հայրենասիրական գործունեությանը: Այս գործում մեզ անգնահատելի օգնություն ցույց տվեցին Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակազմը, հանրային գրադարանի աշխատակիցները, ՀՊՄՀ գրադարանի ողջ անձնակազմը՝ պարոն Պետրոսյանցի ղեկավարությամբ: Մենք էլ այս ձևով մեր հոգու մասնիկը նվիրեցիք և օգնեցիք բացահայտել մեր ուսյալ ազգի լավագույն զավակների գործն ու անմահացնելու նրանց հիշատակը: Նախագծերից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատկությունն ու արժեքը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Առաջին երեք տեղերը զբաղեցնող խմբերը իրենց ղեկավարների հետ պատրաստվեն ելույթ ունենալ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում 16.06.2023 թ., 2. Անհրաժեշտության դեպքում՝ միջոցառման օրվա հետ կապված դեկանատների հետ համաձայնեցնելով՝ փոփոխություններ անել դասացուցակներում, 3. 16.06.2023 թ. ժամը 14⁰⁰-ին ավտոբուսներով շարժվել դեպի Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, ծաղիկներ դնել ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողին, 4. Մասնակցել թանգարանում կազմակերպված էքսկուրսիային և «Ուսյալ ազգի վկայագրերը» ուսանող-դասախոս համատեղ նախագծերի մրցույթի ամփոփիչ միջոցառմանը:

2. ԼՍԵՑԻՆ - Պրակտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ցուցահանդեսի ամփոփման մասին:

Ա. Թոփուզյան – Ինչ վերաբերվում է պրկտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ցուցահանդեսին, ուսանողները ահագին աշխատանքներ էին արել, կազմակերպչական աշխատանքներ իրականացրել, բայց ըստ էության չէին կարողանում ներկայացնել իրենց արածը: Դա կոչվում է պրակտիկայի ժամանակ օգտագործված դիդակտիկ նյութերի ցուցահանդես, ուրեմն այդտեղ պետք է խոսել դիդակտիկ նյութերի մասին, օրինակ, այս դպրոցում, այս դասարանի, այս առարկայի դասավանդման համար օգտագործել եմ այս-այս դիդակտիկ նյութերը, ոչ թե պետք է ներկայացնեն ով է ղեկավարը և այլն, դա երկրորդական է: Այս ամենին պետք է ուշադիր լինել և մյուս տարի նկատի ունենալ այս տարվա թերությունները: Ի՞նչ հարցեր կան:

Գ. Հարությունյան – Դիդակտիկ նյութերի ժողովածուի հետ կապված, երեկ դասախոսներին նամակ եմ ուղարկել, որ կապվեն իրենց ուսանողների հետ, ամբողջացնեն իրենց հոդվածները և ուղարկեն ինձ: Պարզապես եկեք ընտրենք խմբագրական կազմ՝ նյութերը խմբագրելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ. Ասատրյան, Ս. Սիսյան, Ա. Դալլաքյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Դիդակտիկ նյութերի ժողովածուն ներկայացնել էլեկտրոնային գրքի տարբերակով, 2. Ընդգրկել խմբագրական կազմում՝ Ա. Դալլաքյանին, Մ. Ասատրյանին, Ս. Սիսյանին, 3. Էլեկտրոնային գիրքը պատրաստել մինչև ս./թ.-ի օգոստոսի 25-ը:

3. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի հայցորդ՝ Լիլիթ Անտոնյանի «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» թեմայով սեմինարի ներկայացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Թոփուզյան, Գ. Եգանյան, Ա. Դալլաքյան, Լ. Պողոսյան, Գ. Հարությունյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սեմինարի ժամանակ հնչած առաջարկություններն ու դիտողությունները տրամադրել հեղինակին:

4. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի հայցորդ՝ Աստղիկ Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդիրը տարրական դպրոցում» թեմայով սեմինարի ներկայացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Ա. Դալլաքյան, Լ. Պողոսյան, Գ. Եգանյան, Ս. Ջանիկյան, Մ. Գևորգյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սեմինարի ժամանակ հնչած առաջարկություններն ու դիտողությունները տրամադրել հեղինակին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

12.06.2023 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էին Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Օ. Թոփուզյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սահրադյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Ազարյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.դ., պրոֆեսոր պ/կ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Մ. Ասատրյանը Գ. Աղուզումցյանը, Ի. Բաբայանը, Մ. Գևորգյանը, Զ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը, Լ. Նազարյանը, Լ. Պողոսյանը, Գ. Եգանյանը, Ս. Սիսյանը, Գ. Հարությունյանը, Ն. Մարտիրոսյանը, Ա. Դալլաքյանը Ս. Ջանիկյանը, Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Մարինե Մանուկյանը և մագիստրոս Ս. Բաղդասարյանը:

Օրակարգ

1. Մանկավարժության ամբիոնի հայցորդ՝ Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» խորագրով թեկնածուական ատենախոսության նախնական պաշտպանության մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդ Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» խորագրով թեկնածուական ատենախոսության նախնական պաշտպանությունը:

Նիստը վարող ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Օ. Թոփուզյանը ավարտաճառը ներկայացնելու համար ձայնը տվեց ամբիոնի հայցորդ Ա. Գալստյանին:

Ա. Գալստյանի ելույթը.

«Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով մեր ատենախոսության հիմնախնդրի **արդիականությունը** պայմանավորված է տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի անձնակողմնորոշվածությամբ, իր անհատականությունը դրսևորելու, իրեն ոչ մեկի հետ չհամեմատելու և ֆիզիկապես առողջ, ինքնուրույն, ստեղծագործ, արարող անձնավորության բազմակողմանի և ներդաշնակ զարգացման հրամայականով, կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը միտված աշխատանքների բովանդակության և ձևերի, նրանց իրականացման գործընթացի կատարելագործման անհրաժեշտությամբ: Այն նաև պայմանավորված է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում այսօր ներդրվող Հանրակրթական պետական նոր չափորոշչով և

հանրակրթության ոլորտում առկա մի շարք հակասություններով: Դրանք հիմնականում հետևյալներն են.

1. Կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի՝ որպես նրա անձի ձևավորման կարևոր գործոնի ընդունման և դպրոցական պրակտիկայում այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքի նկատմամբ անվստահությամբ:
2. Ուսումնական գործընթացում կրտսեր դպրոցականի դրսևորած առաջադիմության, հոգեկան և ֆիզիկական առողջության ապահովման, բազմակողմանի զարգացման գործընթացում ինքնագնահատականի դերի և նրա ձևավորման ոլորտի վերաբերյալ կրթադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների անբավարար իրազեկվածությամբ ու պատրաստվածությամբ:
3. Մանկավարժահոգեբանական գիտությունների մեջ անձի ինքնագնահատականի ձևավորման գործընթացի կարևորության գիտակցման և կրտսեր դպրոցականների շրջանում իրականացվող մանկավարժական գործընթացում հիմնախնդրի լուծմանը միտված մեթոդական հնարների, տեխնոլոգիաների, անհրաժեշտ գործիքակազմի անբավարար մշակվածությամբ, ուսուցիչների, դաստիարակների, կրթության պատասխանատուների ոչ համարժեք կարողունակություններով:
4. Կրտսեր դպրոցական տարիքային փուլի՝ որպես ինքնագնահատականի ձևավորման ամենանպատավոր և արդյունավետ ժամանակաշրջանի ընդունման, հայի ազգային հոգեկերտվածքում առկա մի շարք մոտեցումների անառարկելի ընդունման և կիրառման սովորություններով:

Մեր **ատենախոսության նպատակն** է. բացահայտել տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման մանկավարժական պայմանները և մշակել կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր:

Մեր **հետազոտության վարկածի** հիմքում դրել ենք այն մոտեցումը, որ կրտսեր դպրոցականի ինքնագնահատականը նրա անձնային հատկանիշների մեջ դիտարկվող համեմատաբար նոր հիմնախնդիր է: Եվ մեր կարծիքով՝ կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման գործընթացն արդյունավետ կարող է լինել, եթե՝

• դիտարկվող տարիքային փուլում ինքնագնահատականի ձևավորումը դիտվի որպես տարրական կրթության գերակա նպատակներից մեկը, ուսումնասիրվի կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման գործընթացը, մշակվեն և կիրառվեն անհրաժեշտ մանկավարժական պայմանները.

• մշակվի և տարրական դպրոցում ներդրվի կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր, որում արտացոլված լինեն կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության բաղադրիչները, առանձնահատկությունները, ինքնագնահատման գործընթացի կազմակերպման

սկզբունքները, մեթոդները, ուսուցչի և սովորողի կոմպետենցիաները, մշակված լինեն նաև ծնողներին ուղղված երաշխավորություններ:

Ուսումնասիրությունների ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել անձի ինքնագնահատականի ձևավորման հիմնախնդիրը մանկավարժության պատմության մեջ:
2. Ուսումնասիրել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման գործընթացի ժամանակակից պրակտիկան արդի տարրական դպրոցում:
3. Բացահայտել կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները:
4. Մշակել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման գործընթացի ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք հետևյալ հետազոտական **մեթոդները.**

- ատենախոսության հիմնախնդրի վերաբերյալ գրականության ուսումնասիրում, ներկայացված հիմնական սկզբունքների քննարկում, հասկացությունային եզրութաբանական վերլուծություն և համադրում - ընդհանրացում -եզրահանգում,
- կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության զարգացմանը միտված գործունեության ծավալում, արդյունքների վերլուծություն, դիտում, հարցախույզ, զրույց, աշակերտների և մանկավարժական փաստաթղթերի ուսումնասիրում: Հետազոտության տարբեր փուլերի ընթացքում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների մաթեմատիկական մշակում և վիճակագրական ամփոփում:

Մեր հետազոտության **նորույթը** հետևյալն է.

1. Հիմնախնդիրը դիտարկվել է հայ և արտասահմանյան մանկավարժության պատմության համատեքստում:
2. Բացահայտվել է կրթադաստիարակչական գործընթացում ձևավորվող կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի էությունը, դրսևորման ձևերը, առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով ինչպես հատուկ նպատակով իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները, այնպես էլ տարրական դպրոցում իբրև ուսուցիչ մեր աշխատանքի երկարամյա պրակտիկան ու փորձառությունը:
3. Դիտարկել ենք և համակարգել ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող հիմնական գործոնները և անհրաժեշտ մանկավարժական պայմանները: Մշակել ենք կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր, որի բաղադրիչներն են՝ կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կառուցվածքը, գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, սկզբունքներն ու մեթոդները, ուսուցչի և սովորողի կոմպետենցիաները, ծնողներին ուղղված երաշխավորությունները:

4. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման անհրաժեշտությունը, գործընթացն ու արդյունքները դիտարկել ենք նրա առողջության և երջանկության ապահովման համատեքստում:

Մեր հետազոտությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն.

Տեսական նշանակությունը. ժամանակակից գիտական տեսանկյունների և մեր ուսումնասիրությունների ու անձնական մանկավարժական փորձի հիման վրա ներկայացված մեթոդական համալիրը կհարստացնի հայ և արտասահմանյան մանկավարժների գաղափարները: Քննարկվող հիմնախնդրի լուծման սկզբունքները, մեթոդները, մանկավարժական պայմանները, ուսուցիչների և աշակերտների կոմպետենցիաները, ծնողների համար մեր մշակած երաշխավորությունները կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ոլորտում կարող են համարվել տեսական գիտելիքների բանկ:

Գործնական նշանակությունը. կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մեր առաջարկած մեթոդական համալիրը բխում է տարրական դպրոցի առարկայական չոփորոշիչների գնահատման նոր կարգի, մասնավորապես ձևավորող գնահատման պահանջներից, հանրակրթության այդ օղակի կրթության բաղադրիչներից և կարող է կիրառվել տարրական դպրոցում: Այն կարող է օգտակար լինել ուսուցիչներին, մեթոդիստներին, ապագա մանկավարժներին, կրթության քաղաքականությունը մշակողներին:

Պաշտպանության ենք ներկայացնում հետևյալ **դրույթները.**

1. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորումը տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի գերակա նպատակներից մեկն է և հանդես է գալիս որպես նրա անձի անհատականության նկարագրի կարևոր բաղադրիչ, նրա առողջության և երջանկության ապահովման գործոն: Այն խարսխվում է նրա՝ ճանաչողական - ուսումնական գործունեության մակարդակի, ձեռք բերած արժեհամակարգի վերաբերյալ սեփական և միջավայրի գնահատականի ամբողջության վրա:

2. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի կարողության ձևավորումն ընթանում է մանկավարժական բազմաբնույթ համակարգային գործոնների ազդեցության շնորհիվ՝ որպես նրա ուսումնական գործունեության արդյունք, որի հիմքում ընկած են ինչպես կրտսեր դպրոցականի անձնային-անհատական և տարիքային բնութագրիչները, այնպես էլ ազգային հոգեկերտվածքով պայմանավորված մի շարք գործոններ:

3. Կրտսեր դպրոցականի համարժեք ինքնագնահատականի ձևավորման վրա ազդում են մի շարք՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ.

ա) որպես օբյեկտիվ գործոններ հանդես են գալիս դպրոցականի ընտանիքը, շրջակա միջավայրը, դպրոցը՝ մանկավարժները, դասընկերներն ու տարեկիցները, ուսումնական

գործունեության պայմանները և այդ գործընթացին կրտսեր դպրոցականի մասնակցության ձևերը.

բ) որպես սուբյեկտիվ գործոններ հանդես են գալիս կրտսեր դպրոցականի սեփական արժեքները, ձեռքբերումները, իր հնարավորությունները և ձեռքբերումները գնահատելու ունակությունը, անձնային առանձնահատկությունները, արժեհամակարգի որոշակի բաղադրիչների առկայությունը (գեղագիտական, մարզական, հայրենասիրական, բնապահպանական և այլն):

4. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մեթոդական համալիրը թույլ է տալիս կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման խնդիրը մասնավորապես ուսուցչի կողմից դիտարկել որպես տարրական կրթության առաջադիր նպատակ, իսկ ընդհանուր առմամբ՝ որպես կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության և համապատասխան վարքի ձևավորման ու դրա կարևորության՝ անհրաժեշտության գիտակցում:

Մեր հետազոտության արդյունքների **հավաստիությունն ու հիմնավորվածությունն** ապացուցվում են հիմնախնդրի վերաբերյալ ստվարաձավալ գրականության ուսումնասիրությամբ, հետազոտության խնդիրների և ուսումնասիրվող դրույթների բնույթին համապատասխան համակարգային և վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ, հետազոտվողների խմբի բավարար քանակակազմով, մեր մանկավարժական մեկ տասնյակից ավելի տարիների փորձից կուտակած փաստացի նյութերի մշակմամբ, ստացված որակական և քանակական արդյունքների ներդրմամբ:

Հետազոտության արդյունքները և հետևությունները 2016-2023 թվականներին քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի նիստերում, հատուկ սեմինարներում, կոնֆերանսներում, Երևանի Հ. Հայրապետյանի անվան համար 78 հիմնական դպրոցի տարրական դասարանների մեթոդմիավորման նիստերում: Դիտարկումների և հետազոտությունների արդյունքների հիման վրա տպագրված հոդվածները տեղ են գտել հայկական և միջազգային գիտական ամսագրերում:

Հետազոտության բազան. ուսումնասիրություններն իրականացրել ենք Երևանի Հ. Հայրապետյանի անվան համար 78 հիմնական դպրոցում, որտեղ մենք աշխատում ենք որպես ուսուցիչ:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը. ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը պարունակում է 7 աղյուսակ, 14 տրամագիր, 6 գծապատկեր և 5 հավելված: Ատենախոսությունը կազմում է համակարգ-չային շարվածքով 141 էջ:

Ատենախոսության առաջին՝ «Սովորողի ինքնագնահատման հիմնախնդիրը մանկավարժության մեջ» վերնագրով գլխում քննարկել ենք հետևյալ երկու հիմնախնդիրները.

• մանկավարժների մոտեցումները անձի ինքնագնահատականի ձևավորման մասին,

• կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման առանձնահատկություններն ու դրդապատճառները։

Ուսումնասիրել ենք և այս գլխում ներկայացրել հայ և արտասահմանյան մանկավարժների հայացքները՝ անձի, մասնավորապես կրտսեր դպրոցականների ինքնագնահատականի, նրանց ինքնագնահատման չափանիշների և բնութագրիչների վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները։

Մեր ատենախոսության «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման մանկավարժական պայմանները» վերնագրով երկրորդ գլխում քննարկել ենք երեք խնդիր.

• ինքնագնահատականի էությունն ու նրա ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները,

• կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ազդեցությունը սովորողի առողջության վրա,

• կրտսեր դպրոցականի ինքնագնահատման ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները։

Հիմք ընդունելով անձի ինքնագնահատման ոլորտի շուրջ Ն. Ա. Բատուրինի, Լ. Ի. Բոժովիչի, Վ.Վ. Բորոզդինայի, Ռ. Բերնեսի, Ա.Վ. Զախարովայի, Լ.Ս. Սլավինայի, Ն.Վ. Դուբրովինայի և այլ մանկավարժների մոտեցումները՝ մենք սահմանել ենք, որ նշված գիտնականներն ինքնագնահատականի էությունը դիտարկում են որպես՝

ա. անձի ինքնախրախուսման կամ ինքնապարսավանքի, ինքնագնահատման և չգնահատման զգացումներ,

բ. մարդու կողմից իր գործունեության և ընդհանուր վարքի կարգավորման որակ,

գ. ինքնավերաբերմունքի և ինքնագիտակցության մակարդակի զարգացման որոշակի տեսակ,

դ. անձի զարգացման բազմաբաղադրիչ գործընթացի արդյունավետության վրա ազդող գործոն։

Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա եզրակացրել ենք, որ կանխելու համար կրտսեր դպրոցականի առողջության վրա անբարենպաստ ազդեցություններ ծնող պատճառներն անհրաժեշտ է՝

• որ ուսուցիչը գիտակցի՝ օբյեկտիվ ինքնագնահատականը առողջ սովորողներ ձևավորելու երաշխիք է։ Այն աշակերտը, որը չունի դա, կարող է տարիների ընթացքում

ձեռք բերել լուրջ առողջական խնդիրներ։ Այս իմաստով չափազանց կարևոր է ուսուցիչ-ծնող համագործակցությունը,

• աջակցել աշակերտներին՝ ճանաչելու իրենց հնարավորությունները ինչպես ուսումնական, այնպես էլ արտաուսումնական ոլորտներում, և այդ տեսանկյունից կազմակերպել նրանց ծանրաբեռնվածությունը,

• զարգացնել սեփական գործունեության ընթացքն ու արդյունքները համարժեք դիտարկելու և գնահատելու աշակերտների կարողությունները, ուսուցչի, ծնողների և դասընկերների մեջ ձևավորել իրենց գործունեության արդյունքներին տված գնահատականները վերլուծաբար և ըմբռնողաբար ընդունելու գիտակցություն,

• դպրոցում և ընտանիքում ստեղծել այնպիսի բարենպաստ միջավայր, որը ոչ միայն կնպաստի աշակերտի ինքնագնահատականի բարձրացմանը, այլև նա կսովորի գործունեության տարբեր ձևերում կրած անհաջողություններն ընդունել որպես իր առջև դրած խնդիրների լուծմանը անպատրաստ լինելու, անբավարար ջանքեր գործադրելու հետևանք, նոր ձեռքբերումների համար կստեղծի ծրագրեր և տեսլական մշակելու, դրանք լուծելուն նպաստող խթանիչներ,

• աշակերտներին սովորեցնել և աջակցել, որ իրենք իրենց լավ ճանաչեն, զգան իրենց մարմնի առանձնահատկությունները, զգացմունքների դրսևորման ուժեղ և թույլ կողմերը, յուրացնեն դրանք զարգացնելու հնարներ, ունենան համապատասխան պահանջմունք,

• ճիշտ նպատակներ դնել, մշակել ու կիրառել դրանց իրականացման քայլերը՝ հանդես բերելով զսպվածություն, պահպանելով բարեվարքության կանոններն ու չափի զգացումը։

«Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձեվավորման ժամանակակից պրակտիկան տարրական դպրոցում» վերնագրավ երրորդ գլխում քննարկել ենք 4 հիմնախնդիր.

• ուսուցիչը որպես կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձեվավորման գործընթացի կազմակերպիչ,

• ինքնագնահատման կարողության ստուգումը «Աստիճանասանդուղք» մեթոդիկայի միջոցով,

• կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի դիտարկում ծնող-աշակերտ «Զուգահեռ հարցման» մեթոդով,

• կրտսեր դպրոցականի ինքնագնահատման ձևավորման գործընթացի կազմակերպման մեթոդական համալիրը։

Այս գլխում մասնավորապես նշել ենք, որ աշակերտի ուսումնական, արտադպրոցական և անձնային-որակական ձեռքբերումներին ուսուցչի տված գնահատականը պետք է համարժեք լինի աշակերտի առաջընթացին և դրականորեն ազդի նրա ինքնագնահատականի բարձրացման ու կայունացման վրա։ Դա հնարավոր է, եթե ուսուցիչն ունենա հետևյալ կամպետենցիաները.

• ինքնաճանաչման և ինքնագնահատման ռազմավարությունների իմացություն,

• անվտանգ միջավայրի ստեղծման կարողություն,

• գիտակցության առկայություն,

• նպատակադրում և պլանավորում,

• մշտական դիտարկում և ռեֆլեքսիա,

• պատասխանատվություն և ինքնուրույնություն,

• ճանաչում և գնահատում,

• հարցադրում և պատասխան։

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացրել ենք նաև Վ.Գ.Շչուրի «Աստիճանասանդուղք» մեթոդիկայի միջոցով կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության ստուգման ընթացքն ու արդյունքները և ծնող-աշակերտ «Զուգահեռ հարցման» մեթոդով մեր իրականացված հարցախույզի արդյունքները և վերլուծությունները։

Ամփոփելով մեր դասավանդած դասարանում իրականացրած ուսումնասիրությունները՝ մենք հանգեցինք մի շարք եզրակացությունների, որոնց հիման վրա մշակեցինք և մեր պրակտիկայում կիրառում ենք բացահայտված խնդիրների լուծմանը նպաստող գործողությունների ծրագիրը։

«Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման գործընթացի կազմակերպման մեթոդական համալիրը» ենթագլխում մենք ներկայացրել ենք մեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակած մեթոդական համալիրը, որի բաղադրիչները մեծապես նպաստում են կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորմանը։

Նշված մեթոդական համալիրի նպատակը կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողությունների և համապատասխան վարքի ձևավորումն ու սեփական զարգացման գործընթացում դրա կարևորության ու անհրաժեշտության գիտակցումն է։

Վերջնարդյունքը՝ ինքնագնահատման կարողություններ ունեցող կրտսեր դպրոցականի ձևավորումն է։

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Նպատակը՝ կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողությունների և համապատասխան վարքի ձևավորումն ու սեփական զարգացման գործընթացում դրա կարևորության ու անհրաժեշտության գիտակցումն է:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման սկզբունքները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մեթոդները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացն իրականացնող ուսուցչի և աշակերտի կոմպետենցիաները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները
- Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացմանը միտված երաշխավորություններ ծնողների համար

Վերջնարդյունքը՝ ինքնագնահատման կարողություններ ունեցող կրտսեր դպրոցական:

Մեթոդական համալիրի բաղադրիչները հետևյալն են.

1. կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողությունների կառուցվածքային բաղադրիչները,
2. կրտսեր դպրոցականի ինքնագնահատման առանձնահատկությունները,
3. կրտսեր դպրոցականի ինքնագնահատման ձևավորման գործընթացի կազմակերպման սկզբունքները, մեթոդները,
4. կրտսեր դպրոցականի ինքնագնահատման ձևավորման գործընթացն իրականացնող ուսուցչի կոմպետենցիաները,
5. կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կոմպետենցիաները
6. կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները,
7. կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացմանը միտված երաշխավորություններ ծնողների համար։

Կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողությունների կառուցվածքային բաղադրիչները.

1. *Ինքնաճանաչում* - ստեղծվում է անվտանգ կրթական միջավայր, օգտագործվում են ինքնաճանաչման ինքնավերլուծության մեթոդներ։

2. *Ռեֆլեքսիա-ինքնագիտակցում* - կրտսեր դպրոցականներն անդրադառնում են կրթական գործընթացի տվյալ փուլում իրենց ձեռքբերումներին. ինչ են ուսումնասիրել, այդ գործընթացն ինչպես են կազմակերպել, որտեղ են իրենց պետք գալու այդ ձեռքբերումները։ Անդրադարձը նպաստում է իրականացրած ուսումնական գործընթացի ձեռք-

բերումների գիտակցական ընկալմանը՝ օգնելով աշակերտներին ձևավորել ինքնագնահատման հնարներ:

3. *Նպատակների ընտրություն* - կրտսեր դպրոցականները սահմանում են և իրենց առջև դնում են ինչպես մոտակա, այնպես էլ հեռավոր ուսումնական խնդիրներ:

4. *Մշտադիտարկում* - սովորողների համար սովորություն է դառնում մշտադիտարկումը, այսինքն, մշտապես վերլուծում են իրենց կրթադաստիարակչական գործընթացի բովանդակությունը, կազմակերպման արդյունավետությունը, նշում են այդ ընթացքում սեփական ձեռքբերումները, դրանց պիտանիության նպատակները:

5. *Ինքնագնահատում* - կրթության չափորոշիչներում նախատեսված գիտելիքների և կարողությունների հիման վրա աշակերտները վերլուծում և գնահատում են իրենց ձեռքբերումները, որոշում և գնահատում իրենց ուժեղ և թույլ կողմերը, և այն ոլորտները, որոնցում իրենց գործունեությունը զարգացման կարիք ունի: Այս բաղադրիչի արդյունավետ կազմակերպման դեպքում սովորողները ձեռք կբերեն համարժեք ինքնագնահատման կարողություն:

6. *Ռեֆլեքսիա, համեմատում, վերանայում և բարելավում* - աշակերտները փորձում են համեմատել և վերլուծել իրենց ուսուցիչների և տարեկիցների համատեղ գործունեությունը, այսինքն, հետադարձ կապ պահպանելու հնարավորություն են ունենում, որի շնորհիվ կարողանում են վերանայել այն ոլորտները, որտեղ պետք է ավելի ակտիվ գործունեություն ծավալեն՝ սեփական ուսումնական նպատակների և խնդիրների լուծման կատարելագործման համար:

7. *Ինքնակառավարում և ինքնակարգավորում* - ուսումնական գործընթացում սովորողները ձեռք են բերում մշտադիտարկման, ինքնաանդրադարձի և ինքնաշտկման, ինքնակարգավորման ունակություններ, ինչպես նաև կարողանում են հասկանալ իրենց այն խնդիրները, որոնց լուծման համար կարիք ունեն այլոց աջակցությանը, սովորում են ճիշտ ընտրություն կատարել առաջնային և երկրորդական խնդիրների միջև, գտնել այն մարդուն, ով իրենց կարող է օգնել տվյալ հարցերի լուծման գործընթացում, կարգավորել օրվա ռեժիմը վալեոլոգիական պահանջների համաձայն, սովորում է ժամանակը ճիշտ բաշխել դրված բոլոր նպատակներին հասնելու համար:

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման սկզբունքները .

1. *Նպատակամետ ինքնագնահատման սկզբունքը:* Յուրաքանչյուր աշակերտ պիտի հստակ պատկերացում ունենա, թե կրթության այդ փուլում ինչ է պահանջվում իրենից, ինչ նպատակներ պիտի դնի իր առջև, որպեսզի կարողանա դրանք ձեռք բերել, հետագայում կարողանա որոշել դրանցից որոնք է ձեռք բերել և որոնք են իր հաջողությունները:

2. *Ակնառու գնահատականի սկզբունքը:* Ինքնագնահատականը պիտի բխի ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները իրական կյանքում կիրառելու սովորողների հմտությունից:

3. *Չափանիշների վրա հիմնված ինքնագնահատման սկզբունքը*: Ինքնագնահատականը պիտի համապատասխանի չափանիշներին ու վերջարդյունքներին, որոնք ներկայացվում են որպես ակնկալվող հաջողություններ: Ուստի դրանք պետք է լինեն հստակ, ստույգ և դյուրըմբռնելի՝ռուբրիկների տեսքով: Սրանց մասին աշակերտները պիտի իմանան նախապես, որպեսզի կարողանան իրենց ձեռքբերումներն ինքնուրույն չափեն և գնահատեն:

4. *Խթանող ինքնագնահատման սկզբունքը:* Ինքնագնահատականը պիտի խթանի սեփական ուսումնական գործընթացում աշակերտին իր թույլ և ուժեղ կողմերը ճանաչելուն, կրթության ոլորտում իր առաջխաղացման շուրջ մտածելուն:

5. *Ինքնակազմակերպման սկզբունքը:*Ինքնագնահատման կարողության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները պիտի նպաստեն սովորողների ինք-

նակազմակերպմանը մոտակա և հեռավոր նպատակների հստակեցմանը, ձեռքբերումների շարժընթացի և արդյունքների մշտադիտարկմանը՝ սկզբում ուսուցչի օգնությամբ, հետո՝ ինքնուրույն: Այս գործընթացում կարևոր է նշված ունակությունների շրջանում սովորողների ձեռքբերումների խրախուսումը, գնահատումը և ուսումնական գործունեության արդյունքների նկատմամբ պատասխանատվության ստանձման շեշտադրումը:

6. *Տարեկիցների հետ համատեղ ձեռքբերումների գնահատման սկզբունքը:* Տարեկիցների հետ ձեռքբերումների համատեղ գնահատումը նպաստում է կրտսեր դպրոցականների համագործակցային, սոցիալական և հաղորդակցական ունակությունների զարգացմանը, սեփական ձեռքբերումների վերաբերյալ դասընկերների ունեցած կարծիքների բացահայտմանը, դիտողությունների և առաջարկությունների հաշվառմանը: Այն կառուցվում է՝ կիրառելով կառավարման հստակ սկզբունքներ և չափանիշներ, որոնք կարող են չափել սովորողների ուսումնական գործունեության վերջնարդյունքները՝ ինքնավերլուծության և հետադարձ կապի ապահովման նպատակով:

7. *Մանկավարժական աջակցության գիտակցականության սկզբունքը:* Աշակերտների ինքնագնահատականի հստակության, ճշտության և արդարացիության ապահովման համար չափազանց արդյունավետ է այդ գործընթացում մանկավարժի ակտիվ դերը, լիարժեք աջակցությունը, որքան էլ որ ինքնագնահատականի զարգացման շուրջ աշխատանքներում աշակերտը հիմնականում ինքն իր հետ է:

8. *Շարունակական ինքնակատարելագործման սկզբունքը:* Անձի ինքնագնահատումն նրա հոգեկերտվածքի աճի զարգացմանը նպաստող անընդհատ գործընթաց է, որի ընթացքում սովորողներն իրենց դժվարությունները, սխալները, բացթողումները դիտարկում են որպես կրթվելու և կատարելագործվելու հնարավորություն:

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մեթոդները.

1. *Վերլուծություն (սեփական գործունեության և ձեռքբերումների):* Այս մեթոդը նախատեսում է աշակերտի կողմից իր կրթության գործընթացի, ձեռքբերումների և զարգացման նկատմամբ անդրադարձ, որը կարող է իրականացվել հաշվետվությունների ներկայացմամբ, անձնական դիտարկումների շարադրմամբ, իր ակտիվության մակարդակի դիտարկմամբ, թույլ և ուժեղ կողմերի գնահատմամբ և բարելավման կարիք ունեցող ոլորտների հստակեցմամբ:

Գծապատկեր 6

2. *Ինքնագնահատում:* Ուսուցչի կողմից հանձնարարված առաջադրանքների, շնորհանդեսների, նախագծերի կատարման ճանապարհով սեփական ձեռքբերումների գնահատում՝ ըստ մշակված չափանիշների: Այս գնահատման արդյունքներով աշակերտները կարող են գնահատման չափանիշների հիման վրա համեմատել, չափել ու գնահատել սեփական աշխատունակության մակարդակները և որոշել հետագա աշխատանքի բովանդակությունը:

3. *Մոտակա և հեռավոր նպատակների սահմանում:* Հիմք ընդունելով կրթության որոշակի ըմբռնումները՝ կրտսեր դպրոցականները (հատկապես ավագ կրտսեր դպրոցական տարիքի սովորողները) կարող են սահմանել և իրենց առջև դնել ինչպես մոտակա, այնպես էլ հեռավոր ուսումնական նպատակներ: Ավելին, նրանք կարող են վերահսկել այդ նպատակներին հասնելու ճանապարհին իրենց ձեռքբերումները և գնահատել սեփական հաջողություններն ու ձախողումները:

4. *Փոխադարձ գնահատում:* Հիմք ընդունելով չափորոշչով սահմանված չափանիշներն ու ծրագրային պահանջները, կրտսեր դպրոցականները գնահատում են ոչ միայն իրենց, այլև իրենց ընկերների ձեռքբերումները: Այս մեթոդի կիրառման գործընթացում զարգանում են նրանց վերլուծական-համադրական, համեմատական քննադատական մտածողությունը: Ընկերների հետ համագործակցային գործունեություն իրականացնելու և սեփական աշխատանքի արդյունքներին վերլուծական անդրադարձ կատարելու կարողությունները:

5. *Ռուբրիկներ, ինքնաճանաչման և ինքնագնահատման մեթոդներ, էսսե, ինքնավերլուծություն, հարց ու պատասխան:* Այս մեթոդները աշակերտներին սովորեցնում են գնահատման չափանիշներ մշակել և ըստ այդ չափանիշների օգնում են իրենք իրենց ճանաչել, գնահատել: Էսսեն կօգնի աշակերտներին հիմնավորել սեփական գնահատա-

կանը, ինքնավերլուծությամբ զբաղվել, հարց ու պատասխանի միջոցով սովորողը կկարողանա համակարգել ձեռքբերումները և զգալ թերությունները:

6. *Աշխատանքային թղթապանակ:* Գործունեության զանազան ոլորտներում կատարած աշխատանքներն ամբարելու, դրանք որպես իրենց գործունեության արդյունք հաճախ դիտարկելու, գնահատելու, ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու և ձեռքբերումներին անդրադարձ կատարելու նպատակով աշակերտներին հաճախակի հանձնարարվում է «Թղթապանակ» ստեղծել: Այն կարող է աշակերտներին ծառայել որոշակի ժամանակահատվածում և նպաստել սեփական առաջընթացի զգացողության առաջացմանը: Թղթապանակը կհետաքրքրի նաև ծնողներին:

7. *Ինքնագնահատականի ներկայացում և հիմնավորում:* Որպես արտադասարանային միջոցառում ուսուցիչները հաճախ կազմակերպում են անհատական շնորհանդեսներ, որոնց ժամանակ աշակերտները վերլուծաբար ներկայացնում են իրենց ձեռքբերումներն ու թույլ կողմերը, ինչպես նաև մշակում են վերջինների հաղթահարմանը միտված որոշակի քայլեր:

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման ձևավորման գործընթացն իրականացնող ուսուցչի կոմպետենցիաները.

Աշակերտի կոմպետենցիաները.

1. Ինքնաճանաչման, մշտադիտարկման տարրական հմտությունների տիրապետում,

2. Պահանջկոտություն սեփական անձի նկատմամբ և պատասխանատվության զգացման առկայություն,
3. Կանխատեսելու, երևակայելու, ստեղծագործելու կարողություն,
4. Ինքնուրույնություն և մոտիվացվածություն,
5. Համեմատելու, վերլուծելու, կարծիք հայտնելու, հարց տալու և հարցերին պատասխանելու իմացություն,
6. Ռեֆլեքսիա կատարելիս, քննադատական մտածողության առկայություն,
7. Ինքնագնահատման, ինքնակառավարման և ինքնակարգավորման հնարների իմացություն,
8. Ճիշտ նպատակներ ընտրելու և դրանց հասնելու ճանապարհների առաջադրում։

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները.

- ✓ Ինքնագնահատման կարողության ձևավորումն ուսուցչի կողմից որպես կրթության նպատակներից մեկն ընդունելը,
- ✓ Աշակերտական կոլեկտիվի առօրյային վերաբերող բոլորկանոնների մշակման գործում երեխաների մասնակցության ապահովումը՝ այսինքն, գիտակցված ենթարկվածության մեխանիզմի կիրառումը։
- ✓ Ցանկացած իրավիճակում աշակերտի բարեկամը մնալու համոզվածությունը (թե՛

ուսուցչի, թե՛ աշակերտի մոտ),

- ✓ Յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ համակարգված, անհատական մոտեցման ցուցաբերումը,
- ✓ Ստեղծագործական, նախաձեռնողական կրթական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կնպաստի կրտսեր դպրոցականի ինքնաճանաչման, ճիշտ նպատակներ դնելու, ապագան կանխատեսելու կարողությունների զարգացմանը՝ պահպանելով իր ինքնությունն ու ինքնատիպությունը ։
- ✓ Բոլոր աշակերտների զարգացման համար հավասար պայմանների և հնարավորությունների ստեղծումը, հանդուրժողականության, ապրումակցման, փոխհարգանքի, ազատության մթնոլորտի ապահովման պայմաններում,

- ✓ Երեխայի սոցիալական անձնային շփումների ուղղորդումը,
- ✓ Երեխայի հոգեկան, ֆիզիկական, բարոյական անվտանգության ապահովումը,
- ✓ Երեխաների հետ միասնական ընդհանուր գործերի պլանավորումն ու իրականացումը,
- ✓ Երեխայի հուզական ոլորտի ներդաշնակ զարգացմանն ուղղված համատեղ գործու-նեության կազմակերպումը,
- ✓ Աշակերտակենտրոն և խնդրակենտրոն մթնոլորտի առկայությունը և դրա ծառայեցումը սո-վորողների ինքնակազմակերպման ու անհատականացմանը, ուսուցման գործընթացի վերջնարդյունքների հաշվառմանն ու իր գործունեության անդրադարձմանը,
- ✓ Երեխաների սոցիալական ակտիվության, տարեկիցների հետ

համագործակցության խթանումը,

- ✓ Ընտանիք-դպրոց համագործակցության արդյունավետ իրականացումը,
- ✓ Ծնողների մանկավարժական կրթության իրականացումը՝ դպրոցում ծնողական համալսարան ստեղծելու միջոցով,
- ✓ Երեխայի դաստիարակությունը գնահատային մթնոլորտում իրականացնելու գործընթացի բացառումը,
- ✓ Անձի արժանապատվությունը նվաստացնող մեթոդների կիրառման բացառումը։

Ուսուցչի կողմից ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի պրակտիկ իրականացման կանոնների իմացությունը, մասնավորապես ուսուցիչը.

ա) ինքնագնհատման ձևավորման կարողությունը (անդրադարձը, ինքնաանդրադարձը, նպատակադրումը և ինքնավերահսկողությունը) ուսումնական գործընթաց է ներառում աստիճանաբար՝ այն ամրապնդելով գործունեության այնպիսի ձևերի միջոցով, ինչպի-սիք են դասարանային կամ խմբային քննարկումները, անհատական մտորումները, բանավեճերը և այլն.

բ) հաստատում է ինքնագնահատման համար կանխատեսվող հստակ չափանիշներ, որոնց մշակմանը մասնակից է դարձնում նաև երեխաներին։ Դա կօգնի երեխաներին՝ հասկանալ ինչ են ակնկալում իրենցից, և ինչպես են իրենք գնահատվելու, և ինչպես կարող են իրենք իրենց գնահատել.

գ) որպես ինքնագնահատման գործիք գործածում է տարբեր ռուբրիկներ, անհատական աշխատանքային թեստեր, հարցաթերթիկներ: Այդ ռուբրիկները, թեստերը, հարցաթերթիկները նույնպես կարող են ստեղծվել սովորողների հետ միասին, կամ հաշվի առնելով նրանց կարծիքը.
դ) նպատակադրման և անդրադարձ կատարելու գործընթացներում խթանում է սովորողների քննադատական մտածողությունը՝ գործածելով հուշումներ կամ ուղղորդող հարցեր.
ե) կազմակերպում է քննարկումներ՝ հնարավորություն տալով, որ սովորողները համագործակցեն միմյանց հետ, լսեն իրենց դասընկերների կարծիքները կատարված աշխատանքի մասին՝ ընձեռնելով դասընկերների կարծիքների հիման վրա սեփական աշխատանքը գնահատելու, սեփական ուժեղ և թույլ կողմերը տեսնելու հնարավորություն.
զ) ստեղծում է աջակցողական կրթական միջավայր, հետադարձ կապ և ռեֆլեքսիա, որոնք սովորողներին կընձեռնեն ռիսկերից չխուսափելու և թույլ տված սխալներից դասեր քաղելու հնարավորություններ: Աջակցող առանց գնահատականի կրթական միջավայրում սովորողներն ավելի անկեղծ են լինում: Հետադարձ կապը և ռեֆլեքսիան պետք է օգնեն սովորողներին նոր նպատակներ դնել՝ ուսումնառության արդյունքները բարելավելու ուղղությամբ.
է) ինքնակարգավորման կարողությունների զարգացման նպատակով յուրաքանչյուր երեխայի համար ստեղծում է ինքնավերլուծությամբ զբաղվելու, նպատակներ դնելու, իր առաջընթացը գնահատելու հնարավորություններ:

Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացմանը միտված երաշխավորություններ ծնողների համար.

- ✓ Օրվա ընթացքում ժամանակ տրամադրել երեխային՝ մշտապես նրան պահելով ուշադրության կենտրոնում:
- ✓ Երեխային զգացնել տալ, որ իրեն սիրում են:
- ✓ Հասկանալ և ընդունել երեխայի զգացմունքները անգամ այն դեպքում, երբ համաձայն չեք նրա հետ:
- ✓ Իր կյանքին վերաբերող բոլոր խնդիրները լուծել երեխայի մասնակցությամբ՝ իր կարծիքը և տեսակետը հաշվի առնելով: Հնարավորություն տալ հիմնավորելու իր կարծիքը կամ ցանկությունը՝ հետագայում արդյունքները գնահատելու պայմանով:
- ✓ Երեխայի կյանքում կարևոր են նաև սահմանափակումները. նա պետք է հասկանա, որ սխալ վարքը կարող է սահմանափակումների պատճառ դառնալ:
- ✓ Ընտանիքում հանձնարարություններ տալ, որոնց ընթացքում երեխան կհայտնվի իր համար դժվար, անծանոթ իրավիճակներում, և աննկատ աջակցել, որ նա հաղթահարի այդ դժվարությունները:

- ✓ Երեխային գովել որոշակի արարքների համար. նա կզգա, որ իր ճիշտ արարքները գնահատվում են և կփորձի դրանք կրկնել և կրկնապատկել:
- ✓ Սովորեցնել, որ երեխան իր առջև ծագած խնդիրները փորձի լուծել ինքնուրույն՝ առանց ծնողի միջամտության:
- ✓ Մշտապես հարգել և գնահատել երեխայի ջանքերը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը:
- ✓ Երեխային ցույց տալ իր զարգացման տարբեր փուլերի վկայությունները (հին լուսանկարներ, տեսագրություններ, երեխայի ձեռքով կատարած աշխատանքներ, նկարներ). տեսնելով ավելի վաղ տարիքում, անցյալում կատարած աշխատանքները՝ ավելի ճիշտ կգնահատի իր ձեռքբերումները:
- ✓ Երեխայի մեջ ձևավորել այն համոզմունքը, որ բոլորի կյանքում կարող են լինել անհաջողություններ, դժվարություններ, սխալներ՝ անհրաժեշտ է դրանք գիտակցել և փորձել շտկել, ուղղել, մեծերի հետ խորհրդակցել:
- ✓ Օգնել, որ երեխան զգա իրեն ընտանիքի լիարժեք անդամ՝ տալով նրան իր տարիքին համապատասխան հանձնարարություններ: Երբեք նրան չտալ իր հնարավորություններից վեր հանձնարարություններ:
- ✓ Տեսնել և գովել երեխայի ուժեղ կողմերը՝ չկենտրոնանալով նրա թույլ կողմերի վրա:
- ✓ Երբեք երեխային չհամեմատել ուրիշի հետ: Նա պետք է զգա, որ իրեն ընդունում են այնպիսին, ինչպիսին կա: Համեմատել իր այսօրվա ձեռքբերումներն ու անհաջողությունները նախկին ժամանակների հետ:
- ✓ Ճանաչել երեխայի ներքին աշխարհը, իմանալ նրա արժեքները, նպատակները, հետաքրքրությունները, կարիքները, հարգել նրա տխրությունները, զգացմունքներն ու հույզերը:
- ✓ Փորձել աշխարհին նայել երեխայի աչքերով:
- ✓ Ընտանիքում դնել ընդհանուր նպատակներ և հստակեցնել երեխայի մասնաբաժինը դրանց իրականացման գործում:
- ✓ Սովորեցնել երեխային ժամանակը ճիտ բաշխել, սնվել և օրվա ռեժիմը կազմել առողջ ապրելակերպի պահանջներին հանաձայն: Մշտապես ռեֆլեքսիա անել, մշտադիտարկում անել սեփական գործունեությունը կարգավորելու և ինքնա-կառավարման համար:
- ✓ Իմանալ ում հետ է ընկերություն անում Ձեր երեխան և որոնք են այդ մտեր-մության հիմքերը: Առանց համեմատելու շեշտել ընդօրինակման արժանի ընկերների անձնային որակները:
- ✓ Երեխայի հետ կազմել ընտանեկան տոհմածառը և ծանոթացնել նրան ընտանիքի պատմությանը, «արմատներին», ավանդույթներին ու

սովորություններին։ Ցույց տալ իր ընտանիքի ինքնատիպությունը և կարգավիճակը հասարակությունում։

✓ Բացահայտել երեխայի ինքնատիպությունը, փորձել միասին այն պահպանել ու զարգացնել։

✓ Բացահայտել երեխայի հնարավորությունները, հակումներն ու կարիքները։ Միասին ընտրել ազատ ժամանակը տնօրինելու ձևերն ու ուղիները։

✓ Երեխային տեղեկություն տալ ընտանեկան բյուջեի մասին և միասին որոշել իրեն հատկացվելիք բաժինը։ Փոխադարձ համաձայնությամբ իրականացնել ծախսերը։

Մեր հետազոտության արդյունքների հիման վրա հանգել ենք հետևյալ **եզրակացություններին.**

1. Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման ուղղությամբ հայրենական և արտասահմանյան հետազոտությունների ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ հետազոտողների ճնշող մեծամասնությունը կարևորում է անձի ինքնագնահատման կարողությունը և հիմնավորում, որ այդ ուղղությամբ աշխատանքները առավելապես արդյունավետ են սկսել տարրական դպրոցում:

2. Կրտսեր դպրոցականների շրջանում մեր իրականացրած հետազոտությունների ընթացքում բացահայտեցինք ուսումնական գործընթացում նրանց ունեցած ինքնագնահատականի տարբեր աստիճաններ. համարժեք-բարձր, համարժեք-ցածր, ոչ համարժեք-բարձր, ոչ համարժեք-ցածր, համարժեք-միջին և այլն: Փաստեցինք, որ անձի աճով պայմանավորված՝ ինքնագնահատականի զարգացման շարժընթացը դրսևորվում է իրատեսական, գիտակցական, հիմնավորվածության, տարբերակվածության որակների ձեռքբերմամբ:

3. Կրտսեր դպրոցականների տարիքին համահունչ՝ ինքնագնահատականի զարգացման գործընթացի ուսումնասիրությունների արդյունքները թույլ տվեցին եզրահանգել, որ՝

- ինքնագնահատականի ամբողջական ձևավորումը պայմանավորված է անձի սուբյեկտիվ որակներով՝ նախաձեռնողականությամբ, նպատակասլացությամբ, արդարացիությամբ, համագործակցությամբ, փոխգործունեությամբ և այլն,
- տարեկիցների հետ հարաբերություններում անձի ինքնագնահատականի նկատմամբ վերաբերմունքի ձեռքբերումը մեծապես պայմանավորված է միջավայրի զգացմունքայնությամբ, տագնապայնությամբ, պահանջկոտության մակարդակով, ինքնագնահատման համարժեք բարձրությամբ, մանկական կոլեկտիվի համախմբվածությամբ և հումանիստական միջավայրի առկայությամբ:

4. Տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության ձևավորման մեթոդները հազվադեպ են

կիրառվում, որի հետևանքով կրթության այս օղակում երեխաներն ուսումնական գործ-ընթացում հիմնականում չեն դրսևորում ինքնաճանաչման, ինքնագնահատման, ինքնավերլուծության, ինքնաքննադատության, ինքնաանդրադարձի կիրառման ունակություններ: Սովորողների մեծամասնությունը չի դրսևորում համարժեք ինքնագնահատման կարողություն:

5. Մեր մշակած կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմաններն ու մեթոդական համալիրը մեծապես կնպաստեն մանկավարժության պատմության և տեսության հարստացմանը, օգտակար կլինեն ուսուցիչներին, ծնողներին, կրթական քաղաքականությունը մշակողներին, կնպաստեն կրթության գործընթացն ու արդյունքները երեխաների առողջության և երջանկության ապահովման տեսանկյունից դիտարկելուն:

Շնորհակալություն ուշադրության համար:

Ա. Թոփուզյան՝ Հարցեր կա՞ն:

1. Մ.գ.թ., դոցենտ Դալլաքյան Ա.- Հետազոտության ընթացքում հանդիպե՞լ եք տարամակարդակ կարողություններ ունեցող երեխաների, որոնց դեպքում սանդղակների փոփոխություն կարող է լիներ:

Պատասխան /ատենախոս/ - Շնորհակալություն հարցի համար: Այդպիսի տարբերություններ չենք նկատել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հարցախույզին մասնակից աշակերտների մեջ նման երեխաներ գրեթե չեն եղել: Իսկ ընդհանրապես հարցաթերթիկի հարցերը այնպես ենք ձևակերպած եղել, որ բոլոր աշակերտների համար հասկանալի լինեն:

2. ***Մ.գ.դ., պրոֆեսոր Ազարյան Ռ.-*** Շատ կարևոր թեմա է քննարկվում, հատկապես պրակտիկայի տեսանկյունից այն չափազանց արդիական է: Խնդրում եմ ասեք՝ ինչ գործնական առաջարկություններ եք Դուք ներկայացրել ուսումնասիրությունների արդյունքում:

Պատասխան /ատենախոս/ - Շնորհակալություն հարցի համար: Ինչպես մենք նշեցինք, ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մենք մշակել ենք և ներկայացրել՝ մեթոդական համալիր, մանկավարժական պայմաններ, առաջադրանքների նմուշ-օրինակներ, հնարներ, երաշխավորություններ: Մենք կարծում ենք, որ ուսուցիչների կողմից մեր մշակած առաջարկությունների կիրառումը մեծապես կնպաստի կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության զարգացման գործընթացի արդյունավետությանը:

3. ***Մ.գ.թ., դոցենտ Ջանիկյան Ս.-*** Նշե՛ք, խնդրեմ կրտսեր դպրոցականների ինքնագնահատման բարձրացման համար ուսուցիչը հատկապես ինչ կարևոր կոմպետենցիոներ պետք է ունենա:

Պատասխան /ատենախոս/- Շնորհակալություն հարցի համար: Մենք մշակել ենք և ներկայացրել ուսուցչի կոմպետենցիաների համակարգ: Օրինակ՝ ինքնաճանաչման և ինքնագնահատման ռազմավարությունների իմացություն, անվտանգ միջավայրի ստեղծման կարողություն, հիմնախնդրի գիտակցության առկայություն, նախ նպատակադրման, մշտական դիտարկման և ռեֆլեքսիա իրականացնելու հմտություն, երեխային ճանաչելու, հասկանալու և աջակցելու կարողություն և այլն

4. ***Մ.գ.թ., դոցենտ Հարությունյան Գ.-*** Կարելի՞ է մեկ դիտարկում. ատենախոսության ներածության հատվածը ներկայացնելիս ուշադրությո՛ւն դարձրեք հետազոտության օբյեկտ և առարկա եզրույթներին: Գրված էր ուսումնասիրության օբյեկտն ու առարկան: Կարծում ենք, որ պիտի ներկայացնել հետազոտության օբյեկտն ու առարկան:

Պատասխան /ատենախոս/- Շնորհակալություն դիտարկման համար: Հավանաբար դա սպրդում է. մենք կշտկենք:

5. ***Մ.գ.թ, դոցենտ Գևորգյան Մ.***- Շնորհակալություն հետաքրքիր թեմայի ներկայացման համար: Դուք ասացիք, որ հետազոտություն եք իրականացրել աշակերտների ծնողների հետ: Ինձ հետաքրքիր է՝ ի՞նչ դժվարությունների եք հանդիպել ծնողների հետ աշխատանքում, և ի՞նչ եք կարծում, ի՞նչպես պետք է ուսուցիչը համագործակցի ընտանիքի հետ, որպեսզի երեխայի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացում ընտանիքը բացասական ազդեցություն չունենա:

Պատասխան /ատենախոս/- Շնորհակալություն հարցի համար: Մեր հիմնական խնդիրը եղավ այն, որ ծնողներից շատերը չկարողացան առցանց/ օնլայն/ տարբերակով լրացնել հարցաթերթիկները: Ուստի մեր կողմից իրականացվեց հանդիպում դպրոցում, որպեսզի բոլորը ներգրավված լինեին հետազոտական աշխատանքին:

6. ***Մ.գ.դ. պրոֆեսոր Թոփուզյան Ա.***- Ի՞նչ սովորեցրիք Դուք ծնողներին, որպեսզի նրանք կարողանան օգնել երեխաներին՝ իրականացնելու ինքնագնահատում: Ինչո՞ւ է պետք, որ երեխան ինքն իրեն ճանաչի, ինչո՞ւ է պետք, որ ուսուցիչը երեխային ճանաչի, ինչո՞ւ է պետք, որ երեխան ունենա ինքնագնահատման կարողություն:

Պատասխան /ատենախոս/- Շնորհակալություն հարցի համար: Եթե երեխան իրեն ճանաչի, նա իր գործունեության բոլոր ձևերում կկարողանա հաղթահարել ծագած խնդիրները, համերաշխ կապրի ինքն իր և միջավայրի հետ: Նա կկարողանա ճիշտ նպատակներ դնել իր առջև, կկարողանա կանխատեսել այն քայլերը, որոնք անհրաժեշտ

են այդ նպատակներին հասնելու համար: Երբ ուսուցիչը ճանաչում է իր աշակերտներին, նա կարողանում է աջակցել նրանց, հասկանալ նրանց խնդիրները, ճիշտ գնահատել ուժեղ և թույլ կողմերը, յուրաքանչյուրի նկատմամբ դրսևորել անհատական մոտեցում:

7. ***Մ.գ.թ., դոցենտ Մարկոսյան Ն.***- Ձեր հետազոտությունը ի՞նչ ցույց տվեց, վերջիվերջո, ի՞նչ գործոններ են ազդում կրտսեր դպրոցականների համարժեք ինքնագնահատականի ձևավորման վրա:

Պատասխան /ատենախոս/- Շնորհակալություն հարցի համար: Դպրոցականների համարժեք ինքնագնահատականի ձևավորման վրա ազդում են ընտանեկան և դրոցական դաստիարակության ոճերը, արժեքները, ուսուցչի, ընկերների գնահատա-կանը, իր և համադասարանցիների սեփական ձեռքբերումներին տված գնահատականը, ուսումնական ոլորտում ձեռքբերումների ինքնագնահատումը:

8. ***Մ.գ.դ. պրոֆեսոր Թոփուզյան Ա.***- Հարգելի՝ գործընկերներ, այժմ ձայնը տանք ընդդիմախոսներին՝ ատենախոսության վերաբերյալ կարծիքները ներկայացնելու համար:

Գրախոս՝ մ. գ. թ., դոցենտ Մարկոսյան Ն.

Ժամանակակից աշխարհում ճիշտ և երջանիկ ապրելու, իր առջև ծագած խնդիրներն արդյունավետ լուծելու, շրջակա աշխարհի ու ինքն իր հետ խաղաղ ապրելու համար յուրաքանչյուր ոք պետք է իր հնարավորությունները գնահատի համարժեք և իր գործունեության ուղին նախագծի, պլանավորի և իրականացնի նկատի ունենալով սեփական հնարավորությունները: Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորումը, ըստ հեղինակի, արդիական է, քանի որ իր արժեքներին և որակներին համահունչ ինքնագնահատականը մարդուն տալիս է բարոյական և հոգեկան բավարարվածություն, խթանում նրա մարդկային արժանապատվությունը, նպաստում ողջ մարմնի և հոգու ձևավորմանն ու բարձրարժեք գաղափարների իրականացմանը:
Ա.Գալստյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է վերը նշված խնդրի վերլուծությանն ու պարզաբանմանը:
Ատենախոսությունը կազմված է 141 էջում ամփոփված ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից:
Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, պատշաճ մակարդակով ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական վարկածն ու նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության բազան, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են հայ և արտասահմանյան մանկավարժների մոտեցումները անձի ինքնագնահատման կարողության ձևավորման հիմնախնդրի մասին, ինքնագնահատման կարողության առանձնահատկություններն ու դրդապատճառները:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման վրա ազդող հիմնական գործոններին, սովորողների առողջության վրա ինքնագնահատականի ազդեցությանը: Հեղինակն այս գլխում ներկայացրել է ինքնագնահատման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները:

Երրորդ գլխում ատենախոսը քննարկել է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ժամանակակից պրակտիկան տարրական դպրոցում: Հեղինակը ուսուցչին դիտարկել է որպես կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպիչ: Հեղինակը ներկայացրել է նաև ինքնագնահատման կարողության ստուգումը «Աստիճանասանդուղք» մեթոդիկայի միջոցով և ծնող – աշակերտ «Զուգահեռ հարցման» մեթոդով: Վերը նշված գլխում հեղինակը ներկայացրել է նաև իր կողմից մշակած կրտսեր դպրոցականի ինքնագնահատման գործընթացի կազմակերպման մեթոդական համալիր:

Ատենախոսությունը շարադրված է գիտական լեզվով և բոլոր գլուխներում հեղինակը տեսական գաղափարներն ու դատողությունները հիմնավորել է սեփական մանկավարժական փորձով՝ ներկայացնելով իր գործունեության արդյունքներ ու օրինակներ: Ինչը, բնականաբար, ավելի արժեքավոր է դարձնում ատենախոսությունը: Ողջ ատենախոսության մեջ կարմիր թելով ընդգծվում է հեղինակի վերլուծական միտքը և պատճառահետևանքային կապերի ապահովումը: Մտահանգումները կատարվել են տրամաբանական և գիտական մոտեցումների համադրման արդյունքում:

Ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք, գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն ճիշտ փոխկապակցված են: Ատենախոսության մեջ առկա են մի շարք աղյուսակներ, գծապատկերներ և տրամագրեր, որոնք լրացնում և ամբողջացնում են հեղինակի միտքը: Հեղինակը լուծել է առաջադրված բոլոր խնդիրները և հանգել համապատասխան տրամաբանական եզրահանգումների: Ատենախոսն իր առջև դրել է խնդիրներ, որոնք իրենց լուծումներն են ստացել ատենախոսության համապատասխան գլուխներում և ենթագլուխներում: Կատարված հետազոտությունը բխում է թեմայի նպատակից, խնդիրներից և մանրամասն վերլուծված է:

Այնուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ նաև մասնակի թերություններից՝

1. 1-ին գլխում հեղինակը ներկայացրել է հայ և արտասահմանյան մանկավարժների մոտեցումներն անձի ինքնագնահատման կարողության ձևավորման վերաբերյալ: Սակայն հայ մանկավարժներին անդրադարձել է 18-րդ դարից սկսած, իսկ արտասահմանյան մանկավարժներին՝ սկսած անտիկ ժամանակներից: Բացի այդ, մեր

կարծիքով, աշխատանքը կլինի ավելի ամբողջական, եթե աշխատանքում տեղ գտած մանկավարժներին ավելացվի նաև Մ.Մոնտեսորիի և Յ.Կորչակի մոտեցումները խնդրի վերաբերյալ:

2. Ատենախոսության գրականության ցանկի մեջ ներառված են գրքեր, որոնք արդեն բավականաչափ հին են /օրինակ՝ 28-38, 41, 44, 51, 52 56, 57 և այլ/: Ատենախոսության թեմայի վերաբերյալ այսօր կա բազմաթիվ ժամանակակից հոգեբանամանկավարժական գրականություն: Այս իմաստով, գրականության ցանկը կարելի է վերանայել:

Վերը նշված թերությունները չեն նսեմացնում քննարկվող ատենախոսության գիտական արժեքը:

Աննա Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահաջներին և ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» թվանիշին:

Ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Ա. Գալստյան /ատենախոս/: Շնորհակալություն, տիկին Մարկոսյան, ճիշտ է Ձեր դիտողությունը: Մեր վարած սեմինարի ընթացքում այդ դիտողությունը մեզ արվել է, և մենք փոփոխություն ենք կատարել, դիտարկել ենք նաև հայ մանկավարժներ Խոսրով Անձրևացու, Գրիգոր Նարեկացու աշխատությունները: Ընդունում ենք նաև Ձեր դիտողությունը Մ.Մոնտեսորիի և Յ.Կորչակի մոտեցումների բացակայության վերաբերյալ: Մեր հետագա աշխատանքներում անպայման կդիտարկենք Մ.Մոնտեսորիի և Յ.Կորչակի աշխատությունները:

Գրախոս՝ մ. գ.թ., դոցենտ Նազարյան Լ.

Հայցորդ Աննա Գալստյանը բովանդակալից ուսումնասիրություն է կատարել ընտրված հիմնախնդրի վերաբերյալ, որն ուղղված է տարրական դպրոցում կրթության որակի բարելավմանը: Ուսումնասիրվել, վերլուծվել և ընդհանրացվել է բավանակաչափ գիտական գրականություն և իրականացվել են հավաստի հետազոտություններ: Հետազոտության արդիականության մեջ հստակ սահմանված է ընտրված թեմայի կարևորությունն ու անհետաձգելիությունը՝ պրակտիկ գործունեության տեսանկյունից, ներկայացված է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը գիտական գրականության մեջ և հիմնախնդրի շուրջ առկա հակասությունները հանրակրթության բնագավառում: Հետազոտության նպատակն օբեկտիվորեն բխում է աշխատանքի թեմայի վերնագրից և դրանով արտացոլված հետազոտության հիմնախնդրից: Հետազոտության նպատակին համարժեք սահմանված են հետազոտության խնդիրները, վեր հանված և որոշակիացված են հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության վարկածը կառուցված է դեդուկտիկ ընդհանրացման միջոցով և կարող է դրվել փորձարարական

հետազոտության կատարման և արդյունքների ընդհանրացման հիմքում: Փաստացի առաջադրված վարկածի ստուգմամբ ատենախոսը կառուցել է աշխատանքի եզրակացություններն ու պատասխանել առաջադրված խնդիրներին:Հետազոտության նորույթը բխում է ատենախոսի կողմից իրականացրած փորձարարական աշխատանքի տրամաբանությունից, իսկ աշխատանքի տեսական և գործնական նշանակությունները համապատասխանաբար կարող են լրացնել գիտության և պրակտիկայի զինանոցը, մասնավորապես՝ տրված մեթոդական համալիրի առաջադրման և գործնական կիրառության ուղղությամբ: Պաշտպանության ներկայացվող դրույթներն ամբողջացնում են աշխատանքի արդիականության և գիտական նորարարության օբյեկտիվ փորձարարական բացահայտումները, որոնք միտված են լրացնելու գիտական միտքն ու մանկավարժական պրակտիկ գործընթացը: Հետազոտության իրականացման փուլերը, բազան, արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ու ներդրումն արժանահավատ են, հիմնավոր և բխում են հետազոտության փորձարարական տրամա-բանությունից:

Հետազոտության առաջին՝ «Սովորողի ինքնագնահատման հիմնախնդիրը մանկա-վարժության մեջ» գլխում ատենախոսը դիտարկել է հիմնախնդրի շուրջ առկա հայացքները մանկավարժական մտքի պատմության մեջ՝ համապատասխանաբար 1-ին ենթագլխում և հիմնախնդրի դիդակտիկ դրսևորումների պատմական ակնարկը՝ համապատասխանաբար 2-րդ ենթագլխում:

Հետազոտության երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման մանկավարժական պայմանները» գլխում ատենախոսի կողմից հստակեցված են ինքնագնահատականի էությունը, որպես մանկավարժահոգեբանական հասկացություն և որպես անձի ֆենոմենոլոգիական մեծություն և հստակ նկարագրված ու թվարկված են դրա վրա ազդող գործոններն ու դրանց բնութագրերը՝ 2.1 ենթագլխում: Ատենախոսի կողմից հատուկ ուշադրության է արժանացել ինքնագնահատականի ազդեցության ուսումնասիրությունը կրտսեր դպրոցականի առողջության վրա, ինչը հատկապես խրախուսելի է, որի արդյունքները ներկայացված են արդեն՝ 2.2 ենթագլխում:

Հետազոտության երրորդ՝ «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձեվավորման ժամանակակից պրակտիկան տարրական դպրոցում» գլխում դիտարկվել և 3.1 ենթագլխում իր ամբողջական արտացոլումն է ստացել ուսուցչի գործառութային առանձնահատկությունները հիմնախնդրի տեսանկյունից: 3.2 և 3.3 ենթագլուխներում ատենախոսը ներկայացրել է իր իրականացրած հետազոտության ընթացքն ու արդյունքները, որը վալիդ է գիտական հետազոտությունների մեթոդաբանության տեսանկյունից: Ատենախոսը վիճակագրական մեթոդների կիրառությամբ կարողացել է ապահովել քանակական արդյունքից՝ որակականի անցման և համարժեք

եզրահանգումներ կատարելու խնդիրը, որն ընկած է աշխատանքի եզրակացությունների հիմքում:

Ատենախոսության 3.4 ենթագլուխը հատկապես բացառիկ կարևորություն ունի, քանզի ատենախոսը ներկայացրել է գիտական տեսանկյունից առաջադրված հիմնախնդիրը ամբողջացնող, իսկ պրակտիկ տեսանկյունից՝ նորարարական մոդել: Մոդելն իրենից ներկայացնում է կրտսեր դպրոցականների ինքնագնահատման գործընթացի կազմակերպման մեթոդական համալիրը: Նշված համալիրը համապարփակ կապի մեջ է գտնվում բացահայտված մանկավարժական պայմանների հետ և ապահովում է աշխատանքի եզակիությունը:

Աշխատանքում առկա են որոշ թերություններ.

1. Աշխատանքում կարիք կա գծապատկերների վերնագրերը տեղադրել վերջիններիս ներքևում՝ ԲՈԿ պահանջների պահպանմամբ:

2. Ցանկալի կլինի առաջին եզրակացությունից հեռացնել ՝՝հայրենական հետազոտություններ՞՞ բառակապակցությունը:

3. Անհրաժեշտ է, որոշ կայքերից արված հղումների էլեկտրոնային լինքերի կողքին գրականության ցանկում նշել նաև այդ կայքերի բովանդակության հեղինակ-ներին և նյութի վերնագիրը կամ բովանդակության առանձնահատկությունը:

4. Անհրաժեշտ է հավելվածների էջադրումը զատել բուն աշխատանքի էջերի քանակից:

Այնուհանդերձ առկա թերությունները չեն իջեցնում կատարված աշխատանքի գիտական արժեքը: Այն ինքնուրույն, ամբողջական, ինքնատիպ և գործնականորեն կարևորություն ներկայացնող հետազոտություն է: Աշխատանքը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Ա. Գալստյան /ատենախոս/: Շնորհակալություն, պարոն Նազարյան, Ձեր դիտողությունները ճիշտ են: Մենք կվերանայենք և կշտկենք Ձեր կողմից նշված՝ ատենախոսության ձևավորման պահանջներին չհամապատասխանող թերությունները:

Արտահայտվեցին՝

1. Մ.գ.թ. դոցենտ Լ. Պողոսյան

Անառարկելի է, որ այսօր ժամանակակից կյանքում ըստ ամենայնի դրսևորվելու համար չափազանց կարևոր է անձի ինքնագնահատման կարողությունը: Ինչի կարիքը ունենք մենք այսօր, և ուրախությամբ պետք է նշել, որ կարող ենք բավարարել Ձեր աշխատանքի

արդյունքների միջոցով։ Պայմանավորված նոր ուսումնական տարվանից տարրական դպրոցի աշակերտների գիտելիքներն ու կարողությունները թվանշանով չգնահատելու հանգամանքով՝ Ձեր մշակած մոդելից մենք կարող ենք վերցնել աշակերտների ձեռքբերումների բնութագրման բաղադրիչները և կիրառել։ Ես ծանոթ եմ, օրինակ, առաջին դասարանցիների ուսումնական ձեռքբերումները գնահատող բնութագրիչներին (որոնք ի միջի այլոց զուտ նկարագրական են), որոնք, ըստ էության, ամբողջությամբ չեն ներկայացնում գնահատման էությունը։ Որպես մանկավարժ ես բարձր եմ գնահատում Ձեր աշխատանքը։ Դուք մշակել եք բնութագրիչներ և դրանք դիտարկել ինքնագնահատման տեսանկյունից։ Ինձ հայտնի է, որ Դուք այսօր աշխատում եք տարրական դպրոցի երկու դասարաններում, և ես վստահ եմ, որ Ձեր շնորհիվ այսօր առնվազն 60 աշակերտ կունենա օբյեկտիվ ինքնագնահատական։

2. Մ.գ.թ, դոցենտ Ի. Բաբայան

Մենք Աննա Գալստյանին լսել ենք տարբեր ձևաչափերով՝ սեմինարների և հաշվետվությունների ժամանակ և բծախնդրորեն քննարկել ենք ատենախոսության հիմնախնդրին առնչվող մի շարք հարցեր։ Ես առաջարկում եմ այս աշխատանքը մշակել որպես մեթոդական ուղեցույց և տպագրել։ Այն չափազանց պիտանի կլինի տարրական դասարանների ուսուցիչներին։ Առաջարկում եմ Ա. Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» վերնագրով ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

3. Մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ Ա. Հովհաննիսյան

Ա. Գալստյանը ներկայացրեց ուշագրավ աշխատանք և կարողացավ խորությամբ և գիտական մակարդակով ներկայացնել իր հետազոտական աշխատանքն ու արդյունքները։ Կարծում եմ՝ աշխատանքը հասցեագրված է ոչ միայն ուսուցիչներին, այլև ողջ հանրությանը։ Ա. Գալստյանի ներկայացրած ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, որ կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության։

4. Մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյան

Շնորհակալություն հետաքրքիր և իրոք հույժ կարևոր աշխատանք ներկայացնելու համար։ Մենք հատկապես կարևորում ենք կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության այն բնութագրիչները, որոնք վերաբերում են նրանց հոգեկան առողջությանը։ Քննարկվող ատենախոսության հիմնախնդիրը չափազանց արդիական է ներկա պահին, երբ ԿԶՆԱԿ-ը սովորողների առաջադիմության գնահատման չափանիշ-

ներ է մշակում։ Ա. Գալստյանի աշխատանքը կարող է չափազանց պիտանի լինել մանկավարժական ոլորտի բոլոր մասնագետներին։

5. Մ.գ.թ., դոցենտ Գ. Եգանյան

Շնորհակալություն Աննա Գալստյանին՝ այսպիսի օգտակար, հետաքրքիր և գիտական պատշաճ մակարդակով ավարտուն աշխատանք ներկայացնելու համար։ Թե՛ մասնագիտական, թե՛ ազգային արժեքների առումով մեզ համոզեցիք Ձեր աշխատանքի կարևորության հարցում։ Հատկապես մենք բարձր ենք գնահատում ինքնագնահատման կարողության անհրաժեշտությունը սերնդի առողջության և երջանկության տեսանկյունից Ձեր դիտարկումը։

6. Մ.գ.թ., դոցենտ Ն. Մարտիրոսյան

Ես մասնավորապես կարևորում եմ Ա. Գալստյանի ատենախոսության հիմնախնդիրը ոչ միայն կրթության նոր չափանիշներում կատարվող փոփոխությունների, այլև հետազոտությունների ընթացքն ու արդյունքները սերնդի առողջության պահպանման տեսանկյունից դիտարկելու և այդ առնչությամբ արժեքավոր երաշխավորություններ մշակելու համար։ Առաջարկում եմ Ա. Գալստյանի ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

7. Մ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Ազարյան

Հարգարժան տիկի՛ն Գալստյան, Ձեր զեկուցումից, տրված հարցերի պատասխաններից, ցուցադրած նյութերից հասկանալի դարձավ, որ կատարել եք արժեքավոր աշխատանք։ Այն այսօր առավել արդիական է՝ պայմանավորված տարրական դպրոցում սովորողների ուսումնական ձեռքբերումները ձևավորող գնահատմամբ աստիճանաբար իրականացնելու համար։ Ես Ա. Գալստյանի աշխատանքը անառարկելիորեն երաշխավորում եմ հրապարակային պաշտպանության։

8. Մ.գ.դ., պրոֆեսոր Թոփուզյան Ա.

Տարիների ընթացքում մեր ամբիոնում շատ նախապաշտպանություններ են եղել, սակայն այս աշխատանքը նման չէ որևէ մեկին ոչ միայն այն պատճառով, որ այն կատարված է ուսուցչի կողմից և շարադրված է սեփական փորձի հիման վրա, այլև աշխատանքում ներկայացված է կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մոդելը, որն իր մեջ ներառում է կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողությունների կառուցվածքային բաղադրիչները, առանձնահատկությունները, սկզբունքները, մեթոդները, անհրաժեշտ մանկավարժական պայմանները, ուսուցչի ու սովորողի կոմպետենցիաները և

երաշխավորություններ ծնողների համար:Այն նաև առանձնահատուկ է նրանով, որ մոդելի յուրաքանչյուր բաղադրիչ առանձին-առանձին վերլուծված և ներկայացված է: Ցավոք, Աննան չներկայացրեց իր մշակած և կիրառած վարժությունների և փոխներգործուն մեթոդական հնարների համակարգը (հավանաբար ժամանակի խնայման նպատակով) և դրանց կիրառման արդյունքները: Այս աշխատանքը հատկապես շատ օգտակար կլինի տարրական դպրոցի ուսուցիչներին ձևավորող գնահատում իրականացնելու գործընթացում: Ես չափազանց կարևորում եմ այն, որ երեխան կարողանա օբյեկտիվ և ինքնաքննադատաբար գնահատել ինքն իրեն: Իսկ ինչո՞ւ է դա պետք. եթե մարդն ուզում է երջանիկ լինել, պիտի կարողանա կառավարել իր կյանքը, գնահատել իր ձեռքբերումները: Կարծում եմ, որ Ա. Գալստյանի աշխատանքի հիմնախնդիրը հենց սա է, որն ինքը կարողացել է ներկայացնել:

Միանում եմ իմ գործընկերներին և Ա. Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» վերնագրով ատենախոսությունը երաշխավորում եմ հրապարակային պաշտպանության:

Առաջարկությունը դրվեց քվեարկության: Քվեարկությանը մասնակցեց ամբիոնի նիստի 21 մասնակից: Արդյունքներն են՝ կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ - Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի հայցորդ Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» խորագրով թեկնածուական ատենախոսությունը ավարտուն, ամբողջական, գիտագործնական նշանակություն ունեցող աշխատանք է, համապատասխանում է ՀՀ Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին:

1. Այն երաշխավորել հրապարակային պաշտպանության:
/Կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

12.06.2023 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻ

Ամբիոնի 23 դասախոսներից նիստին մասնակցում էին 17-ը:

Նիստին մասնակցում էին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.թ., դոցենտներ՝ Գ. Աղուզումցյանը, Ն. Մարտիրոսյանը, Ա. Հովհաննիսյանը, Ի. Բաբայանը, Ս. Սիսյանը, Զ. Ասատրյանը, Լ. Նազարյանը, Գ. Հարությունյանը, Մ. Ասատրյանը, Գ. Հակոբյանը, Մ. Գևորգյանը, Ա. Դալլաքյանը, Գ. Եգանյանը, Ս. Ջանիկյանը, Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Մ. Մանուկյանը:

Հարգելի պատճառներով բացակայում էին՝ մ.գ.դ., պրոֆեսոր Մնացական Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Հ. Թադևոսյանը, Ա. Մանուկյանը, Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դասախոս Մ. Թադևոսյանը:

Օրակարգ.

1. Դասավանդվելիք առարկայական փաթեթների պատրաստման մասին:
2. Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի կողմից <<Արդի մանկավարժական գիտությունների հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները>> խորագրով միջազգային կոնֆերանսի անցկացման մասին:
3. 2023-2024 ուս. տարում հրատարակվելիք հոդվածների մասին:
4. Պրակտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ժողովածուի և Ուսանող-դասախոս համատեղ կոնֆերանսի հոդվածների ժողովածուի կազմակերպման ընթացքի մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Դասավանդվելիք առարկայական փաթեթների պատրաստման մասին:

Ա. Թոփուզյան – Հարգելի դասախոսներ, առաջին բանը, որ ես ուզում եմ խոսել դա դասավանդվելիք առարկաների մաին է, մենք կաշխատենք քիչ փոփոխություններ անել դասաբաշխում անելիս, բայց այս տարի 550 ժամով պակասել են ամբիոնի ժամերը, կաշխատենք այնպես անել, որ պահել հիմնականը: Որոշ ֆակուլտետներում անցյալ տարի մանկավարժությունը առանձին հոսքերով է եղել, բայց այս տարի միացումներ են սպասվում, որի հետևանքով հոսքը մեծացել է բայց դասախոսը մնում է մեկը, այդ իմաստով կրճատումներ կունենանք; Սակայն ունենք նաև այլընտրանքային առարկաներ ավելացված, որոնք պետք է լրացվեն; Այս բոլորը հաշվի առնելով միևնույն է պակասած ժամեր ունենք: Կփորձենք մեկ շաբաթվա մեջ ըստ ծանրաբեռնվածության ձեզ ուղարկել յուրաքանչյուրիդ դասաբաշխումը: Բայց դուք բոլոր դեպքերում ձեր փաթեթները նորից վերանայեք:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վերանայել դասավանդվելիք առարկաների փաթեթները, փոփոխությունների դեպքում դրանք համապատասխանեցնել ըստ ծանրաբեռնվածության ցանկի:

2. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի կողմից <<Արդի մանկավարժական գիտությունների հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները>> խորագրով միջազգային կոնֆերանսի անցկացման մասին:

Ա. Թոփուզյան - Հարգելի դասախոսներ, Ձեզ տեղյակ ենք պահում, որ ս./թ.-ի հոկտեմբերի 20-21-ին տեղի է ունենալու Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի կողմից «Արդի մանկավարժական գիտությունների հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային կոնֆերանսը: Գիտական հոդվածների պատրաստման համար Ձեզ կուղարկվի համապատասխան ուղեցույցը: Խնդրում եմ լինել ակտիվ և մասակցել միջազգային կոնֆերանսին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հանձնարարել Ս. Բաղդասարյանին կոնֆերանսի և գիտական հոդվածների պատրաստման մասին համապատասխան ուղեցույցը ուղարկել մինչև 17.07.2023 թ.,

2. Հանձնարարել դասախոսներին ցանկության դեպքում գրանցվել և մասնակցել միջազգային կոնֆերանսին:

3. ԼՍԵՑԻՆ - 2023-2024 ուս. տարում հրատարակվելիք հոդվածների մասին:

Ա. Թոփուզյան – Վերջին գիտխորհրդի ժամանակ ռեկտորի կողմից նշվեց, որ մենք վատ ենք զբաղվում մանկության հիմնախնդիրներով: Քանի որ ըստ մեր ներքին կարգի ամեն դասախոս ուսումնական տարվա մեջ առնվազն երկու հոդված պետք է պատրաստի, եկեք մյուս տարվա հոդվածները պատրաստենք մանկության հիմնախնդիրների բացահայտման համատեքստում: Դա այնքան մեծ դաշտ է, այնպես որ եկեք մտածենք մինչև սեպտեմբեր ով, ինչ թեմաներով հոդվածներ պետք է պատրաստի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել գիտական 2 հոդվածների թեմաները մինչև ս./թ.-ի սեպտեմբերի 5-ը:

4. ԼՍԵՑԻՆ - Պրակտիկայի ընթացքում մշակված դիդակտիկ նյութերի ժողովածուի և Ուսանող-դասախոս համատեղ կոնֆերանսի ժողովածուի կազմակերպման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Թոփուզյան, Գ. Հարությունյան, Ա. Դալլաքյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Մինչև ս./թ.-ի օգոստոսի 25-ը պատրաստել երկու էլեկտրոնային ժողովածուները, 2. Պատասխանատուներ նշանակել Ա. Դալլաքյանին (կոնֆերանսի նյութերի ժողովածու) և Գ. Հարությունյանին (պրակտիկայի նյութերի ժողովածու):

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

06.07.2023 թ.